

17997



189 b

2010

b2001

ՎԱՀԱԳՆԱՆ

## ՀԵՆՐԻԽ ՊԵՍԱԼ. 088Ի

ՆՐԸ ԿԵՇՆՔԲ, ԳՈՐԾՈՒՆԵԱԹԻՒՆԲ ԵՒ ՀԵՂԻՆԵԿԱԹԻՆՆԵՐԲ

«Որքան զոհեր է պահանջում մարդ-  
կութիւնը իւր վերին նպատակնե-  
րին հասնելու համար...»

Էջ 23.

Թ Ի Փ Լ Ի Ս

Տիգրաֆիա Ի. Մարտirosianца, Օրբ. ոլ., ձ. № 1—2.

ՏՊԵՐԱՆ ՅՈՎՀԵՆՆԵԿՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

1896

ԳՅՅՈՒՄՏԱՐՔ ՊԵՂԱՋ

Այս աշխատանքը պահպանութեան  
առաջնային աշխատանք է առաջնային  
աշխատանք առաջնային աշխատանք

ՀՕ 33

0 4 1 4 9 26

Հ-1 Հայոց ազգական Ազգային  
ազգային ազգային ազգային ազգային  
ազգային ազգային ազգային ազգային

X 3719 մ  
Դ-ԱՊԱ ԿԱԶԱԳԱՆ

## ՀԵՆՐԻԽ ՊԵԼՍԱԼ 088Ի

ՆԲԱ ԿԵԱՆՔԸ, ԳՈՐԾԱԿԵՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ՈՌՔԱՆ զոհեր է պահանջում մարդ-  
կութիւնը իւր վերին նպատակնե-  
րին հասնելու համար...»

Էջ 23.

Փ Ի Ֆ Լ Ի Զ  
Յ. Մարտիրոսյանցի տպարան  
1895



Ա Զ Դ

Սոյն գրքի անտիպ ձեռագիրը սրանից գրեթէ երկու տարի առաջ յանձնել էի պ. Խսահակ Յարութիւնեանցին քննադատելու նպատակով։ Ներկայ թուի սկզբներում Թիւրքա-հայաստանում և մողական Պարսկաստանում—այդ որորմելի բռնակալ պետութիւնների կամայական աշխարհ-ներում—կատարած ճանապարհորդութիւնից վերադառնալով կրկին Թիֆլիզ, բաղդ ունեցայ անձամբ ներկայանալու ցիշեալ յարգոյ պարոնին և նրանից տեղեկանալ համեստ կարծիք գրուածքներիս մասին։ Ահաւասիկ այսօր, չնորհիւ պ. Յարութիւնեանցի բարեկամական խորհրդի, լոյս եմ ընծայում «Հենրիխ Պեստալոցցի, նրա կեանքը, գործունէութիւնը և հեղինակութիւնները», մի մարդու, որ յայտնի ճանապարհարթող թէալական ուղղութիւն տուող, ժամանակակից մանկավարժական զարգացման և յառաջընթացութեան գեղեցիկ մշակողն է եղել, մի մարդու, որի համեստ կեանքը և գործերը կըկարդայ գրքիս յարգելի ընթերցողը։

Վաշագան։



1692-51

ովքը Աթմէր սիմակը պրյառնել բանել մզդը մշտ  
միքամնի ոչ ինտուս բանում ու ԱՅ բնահանց զառա պահ  
և ուղարկութիւն գոյնութեան արձուարաններ  
բառ և ուղարկութիւն մախարն և և ուղարկութեան ու ու  
շքախուն մախարնեան միման ոչ ինտուս բանու ու միքամն  
խոր ու բարձի բնի ոչ ինտուս պահանց նախանց և ուղա  
րկութիւն զարման զարման բառ և գրիմ Ե՛ մաքք  
ու մանաւ բանութեան բնակը և միքամն խոր բանու  
միքամն զարման աման աման և վերա  
և ուղա մրցանի մախարնեան միման ոչ ինտուս ու  
ու ու մանաւ ուղարման ուղա միքամն միքք և ուղարման  
միման ուղա ուղարման ուղա ուղարման միման միման  
ուղա ուղարման ուղա ուղարման միման միման միման  
ուղա ուղարման ուղա ուղարման միման միման միման  
ուղա ուղարման ուղա ուղարման միման միման միման

## ՀԵՄԻԼ ՊԵՍԱՆԼ 088Ի

**Պեստալոցցին Տուլեց Ցիրիխում 1746 թուականի**  
յունուարի 12-ին: Վեց տարեկան հասակում նա գրկուեց  
հօրից, որ արհեստով վիրաբոյժ էր: Դրա հետեանքն այն  
էր, որ չենթիլը կրթութիւն ստացաւ իւր մօրից, որի  
օգնականն էր այդ բանում նրանց ընտանիքի հետ կապուած  
ու մտերիմն Բաբէլի անունով մի աղջիկ: Ակներեւ է, որ  
այդպիսի գաստիարակութիւնը պէտք է երևար երիտասարդ:  
Պեստալոցց բնաւորութեան մէջ: Նրա անկեղծութիւնը  
և աննենգութիւնը, հոգու բնիքովթիւնն ու դիւրա-  
գգածութիւնը, երևակացութեան սաստկութիւնը, զգու-  
շութեան և կենցաղագիտութեան թերութիւնը ամենագե-  
ղեցիկ կերպով ապացուցանում էն այդ: «Ես զարգացաց, ա-  
սում է նա, ամենաբարի մօրս հովանաւորութեան ներքոյ,  
որպէս մայրական որդի: Խճանից բոլորովին հեռու էր ա-  
մեն մի ազդեցութիւն, որ կարող էր զարթեցնել իմ մէջ  
այրական բնաւորութեան եռանդը, սիրել տալ այրական  
պարագաները և տալ մտքիս այրական ուղղութիւն»:  
Նրա պատի՝ գլւղական քահանացի աստուածպաշտութիւնը  
նոյնպէս խորին և անջնջելի տպաւորութիւն թողեց երե-

իսայի հոգու վրա: Միայն չնայելով իւր բարի և փափուկ բնաւորութեանը, Պեստալօցցին ստիպուած էր տանել ընկերների ծաղրածութիւնները, ուսուցիչների անարդարութիւնն ու անհեռատեսութիւնը իւր ծննդավայր քաղաքի ուսումնարանում, ուր նա պէտք է պարապէջ աստուածաբանական և իրաւաբանական գիտութիւններից: Հետեւանքն այն եղաւ, որ նրա մէջ զարգացաւ մանաւանդ սաստիկ դիւրազգածութիւն դէպի ամենայն անարդարութիւն ու դժգոհութիւն ընդդէմ կամայականութեան և բռնութեան: Այդ զգացմունքները, որոնք ևս առաւել բորբոքուեցան ու սաստիկացան նրա մէջ Թուսսօն կարդալով, ժողովրդական թշուառութիւնները տեսնելով և Ցիւրիխի Collegium humanaeitatis-ում գտնուելով, լրին նրա հոգին մինչ այն աստիճան, որ նա բաժանուեց Լաֆատէրից և միւս անարդար մեծաւորներից և վասթար քահանաներից: Այդ օրից՝ ծագած կեղտոտութիւնները ստիպեցին նրան դադարեցնել գիտութիւնների պարապմունքը և ձեռնարկել գիւղատնտեսութիւն, որի մէջ նա նկատեց աւելի իրական միջոց՝ ժողովրդի դրութիւնը բարուքելու համար: Այդ պարապմունքների վրա նա նայում էր ոչ միայն ինչպէս նիւթական կարօտութիւնն ու չքաւորութիւնը հեռացնող միջոցի այլ և ինչպէս մտաւոր ու հոգեւոր զարգացման միջոցի վրա, կամ թէ նրա յատուկ բառերով. «Ինչպէս մի միջոցի վրա, որով կարելի է յարուցանել վաղեմի ընտանեկան հոգին, ընտանեկան բարեբաղդութիւնը, սէրը դէպի ընտանեկան կեանքը և վաղեմի յարգանքը ոչ միայն դէպի երկրագործութիւնը, այլև դէպի երկրագործութեամբ պարապող մարդիկը»: Այդ կըուադատութիւնների գորութեամբ նա իւր քսան և երկու տարեկան հասակում դնեց Նէցիօփի կայքը և յետոյ անմիջապէս՝ 1769թուին ամուսնացաւ Աննա Շուկրէսի Ցիւրիխի մի հարուստ վաճառականի աղջկայ վրա,

որ կարողացաւ գնահատել և նշանակութիւն տալ Պեստալօցցու ներքին արժանաւորութիւններին, չնայելով որ նա մանկական պարզամտութեամբ յայտնեց նրան իւր բոլոր թերութիւններն ու թոյլ կողմերը: Այդ շաղկապով, որ ընդհատեց Աննայի մահը 1815թուականին, պէտք է հաստատէր Պեստալօցցին այն՝ իւր մի անգամ յայտնած մտքի մէջ, թէ «մարդուս բոլոր բարեբաղդութեան և երջանկութեան աղբիւրը գտնւում է ընտանեկան կեանքի մէջ»: Նէցիօփում նա յարմար ժամանակ ունեցաւ աւելի մօտից տեսնելու և իմանալու ժողովրդի աղքատութիւնն ու միշտը, նրա կոպտութիւնն ու վատթար դաստիարակութիւնը: Պեստալօցցին հաւաքում էր իւր չուրջը աղքատ երեխաներ, ստիպում էր նրանց ամառ ժամանակ աշխատել դաշտում, իսկ ձմեռը մանել ու ձեռագործով պարապել և այդ միջոցում ուսուցանում էր նրանց: Զուտով նրանց մօտ հաւաքուեցան մօտ յիսուն երեխայ: «Ես ապրում էի ամբողջ տարիներով աւելի քան յիսուն թշուառ երեխաների շրջանում. թշուառութեան ժամանակ մասնակից էի անում նրանց իմ հացը, ինքս ապրում էի որպէս աղքատ, նրա համար որ կարողանամ տալ չքաւորներին ապրելու կարողութիւն»: Սակայն Պեստալօցցու ծրագրի ընդարձակութիւնը գերազանցում էր առանձին անձի կամ անհատի կարողութիւնից: Տէրութիւնը չէր օգնում նրան, նա ինքը չուներ ամեն բանի մէջ սաւնասիրտ հաշուեպահութեան ձիւք (և չստացաւ այդ շնորհքը իւր ամբողջ կեանքի ընթացքում): Նրա ուշքն ու միտքը դարձրած էր ամբողջի վրա, այս պատճառով և զանց էր առնում մանր բաները. նրան պակասում էր գործնական փորձնականութիւն: Երեխաները, թէ շատ աղքատ, բայց մասսամբ փափկասնունդ էին, ծնողները կարծում էին թէ մեծագոյն ծառայութիւն են ցոյց տալիս, թողնելով նրա մօտ իրանց երեխաները, յայտնում էին զա-

Նադան անբաւականութիւններ կամ տանում էին երեխաներին, հէնց որ միայն նրանք ստանում էին նոր շորեր: Կառավարութիւնը չէր պաշտպանում նրա իրաւունքները, և նա ընդհանուր ծալրածութեան առարկայ էր դարձել: Պեստալօցին շատ պարտքերի ենթարկուեց, նա պէտք է հրաժարուել էր իւր գործից և մի քանի տարի անցրել էր իւր կեանքը յտին կարօտութեան մէջ: Նրա հաւատարիմ կինը, որ դրաւ էր դրել իւր բոլոր կայքը, ծանր հիւանդացաւ: Նրա բարեկամները կորած մարդ էին համարում նրան, որին անկարելի էր արդէն փրկել: Այնուամենայնիւ նա (այն ամենովը) չարեց այն, ինչ որ պէտք է անէին նրա փոխարէն հարիւրաւոր մարդիկ: Նա անողոքելի և անկարելից սրտով չներժուեց մարդկանցից և եթէ ժամանիցոյում ևս կասկածում էր վստահանալու իւր և իւր զօրութիւնների վրա, ապա չէր տադանաւում իւր խոհեմութեան և իւր ընտրած միջոցների նվատակայարմարութեան վրա: Նա հաստատամտութեամբ շարունակում էր գնալ միւնոյն ճանապարհով: Ինքն ապրելով չքաւորութեան մէջ, նա աւելի լաւ, քան մի ուրիշը, կարողացաւ հասկանալ ժողովրդի ալբատութիւնը և այն աղբիւրները, որոնցից նա առաջանում էր: «Ես տարայ և համբերեցի այն, ինչ տարաւ ու համբերեց ժողովուրդը: Ես տեսաց ժողովուրդն այնպէս, ինչպէս նա էր իրականապէս, և որպէս նա ոչ մէկին չէր երևացել»: Համբաւը նրա ապրուստը հայթհավթելու գործունէութեան, նրա բազմանող հարստութեան մասին, նրա սպիտակացրած տները, նրա պերճ դոյցը, մինչև անգամ նրա մի քանի ուսուցիչների սոլլատական մետողն ու ժողովները ընթերցանութեան համար, որոնք կարգուած են հասարակութեան ստորագոյն դասակարգերից, չգեցին ինձ մոլորութեան մէջ»:

**Թէւ Պեստալօցին սաստիկ վերաւորուած էր իւր**

անյաջողութիւններից, բայց չէր դադարում ձգտել մի և նոյն նպատակին. ոչնչացնել ժողովրդի աղքատութեան աղբիւրը, իսկ այդ միջոցին, քաշակերուած իւր բարեկամ նկալինից, նա առաջին անգամ գրականական ասպարէզ մտաւ: «Ճզնաւորի երեկոյեան ժամերում» (Abendstundেn eines Einsiedlers) նա աշխատում էր պարզել իրան իւր յատուկ գաղափարները, և այսոնեղ նա արտայայտեց մոքեր, որոնց վերջը մանրամասնօրին կարողացաւ պարզաբանել:

«Մարդս, որտեղ և բնակուէր՝ հոյակապ պալատներում թէ ողորմելի խրճիւր, ինչ բան է նա նոյն իսկ իւր գոյութեամբ, ինչիցն է որ այդ չեն յայտնում իմաստունները, ինչո՞ւ համար արդեօք բարձր ու վսեմ հանճարներին չէ յաջողուում թափանցել մարդկացին բնութեան գաղտնիքի մէջ: Քիւղային անգամ զիտէ այն ցուկի բնութիւնը, որ ինքը գործ է ածում: Մթէ հովիւր չէ ուսումնակիրում այն գաւնների բնութիւնը, որոնց նա արածեցնում է. ինչո՞ւ համար ուշեմն միմիայն մարդս չէ աշխատում հասկանալու իւր բնութեան կարիքները, որ կարողանար հիմնել նրանց վրա իւր բաղդը և բարօրութիւնը, ինչո՞ւ նա չէ որոնում այն ճշմարտութիւնը, որ իրան բաւականութիւն տար հոգու խորութեան մէջ, զարգացնէր նրա կարողութիւնները և բերկութիւն առնէր նրա կեանքը»:

«Մեր բնութեան բոլոր հիմնական զօրութիւնները, որոնք յայտնում են մեր ներքին բարեկեցութիւնը, չեն պատկանում արուեստի և պատահականութեան պարզեներին: Նրանց նախասկզբնական սաղմերը ծածկուած են իւրաքանչիւր մարդու բնութեան մէջ, նրանց զարգացումը մարդկութեան ընդհանուր կարիքն է: «Բոլոր մարդիկը իրանց բնութեամբ միակերպ են և պէտք է ընթանան դէպի իրանց նպատակը մի ճանապարհով: Այս պատճառով և մարդկացին բնութեան նոյն ինքն գոյութիւնից դուրս բերած

ճշմարտութիւնը, կը լինի ընդհանուր մարդկացին ճշմարտութիւն, հազարաւոր թշնամիներ հաշտեցնող մի միջոց։ Հասցնել մարդու հիմնական էական կարողութիւնը զարդացման բարձր աստիճանին, նոյն իսկ բնութիւնից ցոյց տուած ճանապարհով, — ահա մարդկացին կրթութեան ընդհանուր նպատակը։ Վարժութիւնը և կարողութիւնը՝ յարմարեցնել իւր կարողութիւնները և գիտութիւնները կեանքի զանազան դէպքերին և հանգամանքներին — յատկապէս կրթութեան գործ է։ Բայց վերջինս պէտք է հպատակուի միշտ մարդկացին կրթութեան նպատակին։ Ով մարդ չէ ներքին զարգացած կարողութիւններով, ապա նրան պակասում են գրաւականներ, որոնք որոշելու էին նրա ամենամօտ նշանակութիւնը, և այդ պակասութիւնը չէ գնուում ոչ մի արտաքին գերազանցութեամբ։

« Բնութիւնը զարգացնում է մարդու բոլոր կարողութիւնները շարժման միջոցով, և նրանց աճումն կամ առաւելութիւնը կախուած է զործնական յարմարութիւնից։ Բնութեան օրէնքը մարդու զարգացման համար կայանում նրա տեղեկութիւնների, ընդունակութիւնների և բնածին գրաւականների յարմարեցնելու և կատարելագործելու մէջ։

« Գերդաստանի հայրը չպէտք է ձգտի իւր երեխանների մտաւորական կարողութիւնները հեռաւոր առարկաների վրա, մինչեւ որ նրա միտքը բաւական ամրութիւն ըստանայ մօտաւորագրունի մէջ վարժուելով։ Հայրը պէտք է փախչի երեխայական կարողութիւնների չափազանց լարողութիւնից կամ ձգտումից։ Ով չէ հետեւում բնութիւնից սահմանուած այդ կարգին, նրանք աւերում են իրանց մէջ իրանց սեփական կարողութիւնները և լսանգարում են իրանց ներքին գոյութեան հաւասարակշռութիւնը։ Այդ այն դիպուածուածում է մէջ աւելի մօտաւոր յարաբերութիւնների գիտենալու և աւելի մօտաւոր գործերը հաստատ հիմքի վրա կարդաւորելու մէջ»։

րաստելով իրանց միտքը րէալական աղարկաների ուսումնասիրութեան և ընդունակ զինելով նրա ճշմարտութիւնը ճանաչելու, այնպիսի առարկաների են ձեռնարկում, որոնք պարունակում են լոկ բառեր և նրբաբանութիւններ, և այդպիսով իրանց հոգեկան զարգացման հմաքը փոխանակ առարկաների դնում են դատարկ հնչվաներ և բառեր։ Արուեստական ճանապարհը, որի վրացով ամենայն տեղ առաջնորդում է ուսումնարանը, ջանապով իրերի բնական կարգը շինել արուեստական գրականական տեսակատից նայելով, տալիս է մարդուն կերծ և խաբեբացական փայլ, որ ծածկում և թագյունում է ներքին դատարկութիւնը և անզօրութիւնը, և բաւականութիւն է տալիս այնպիսի ժամանականերին, որպիսին է մեր դարը։

« Ուսուցման հարկադրողական և իմաստակաբար անփոփիս եղանակն նոյնպէս ընդիմաբանում է զարգացման բնական ընթացքին։ Բնութիւնն առաջնորդում է դէպի ճշմարտութեան գիտութիւնը առանց ամենայն իմաստակութեան։ Բնութեան մէջ ամեն ինչը ընթամում է աշխատ, ոչ մի տեղ չկաց զարգացման ատիպողական ընթացք։ Մարդս կորցնում է իւր հոգու այն հաւասարակշռութիւնը, որ կազմում է նրա զօրութիւնը, երբ նրա միտքը չափազանց միակողմանի և չափազանց զօրեղ կերպով ձգտում է դէպի մի առարկա։ Այն կրթութիւնը, որ տալիս է նոյն իսկ բնութիւնը, բոնութեամբ չէ, բայց նա զանազանում է հաստատութեամբ, և այն կարգի մէջ, որին հետեւում է նա, նկատում է խիստ հաշուետեսութիւն»։

« Ճշմարտութեան առողջ զգացմունքը ծննդում է նեղ շրջաններում, մարդկացին ասող իմաստութիւնը հաստատում է մեր աւելի մօտաւոր յարաբերութիւնների գիտենալու և աւելի մօտաւոր գործերը հաստատ հիմքի վրա կարդաւորելու մէջ»։

1798 թուին յայտնուեց Պեստալօցցու մի նոր հրատարակութիւն։ «Հետախուզովովթիւն մարդկութեան զարգացման բնական ընթացքի վրա» (Nachforschungen über den Gang der natur Entwickelung des Menschen-geschlechts), — հեղինակութիւն, որ երևան գալուն քիչ չօգնեց Պեստալօցցու ծանօթութիւնը Ֆիլստէի և նրա ուսման հետ, Լաֆատէրի տանը։ Գրաւուած Ֆիլստէի գաղափարներով, նոյնպէս և Թուասօն կարդալով, Պեստալօցցին աշխատում է այդ հեղինակութեան մէջ ցոյց տալ այն տեղը, որ պատկանում է Երիտասարդութեան դաստիարակութեանը՝ ժողովրդական և արքունական կեանքի ամբողջ շարքի մէջ։ Նա հարցնում է իրան, ի՞նչպիսի բան եմ ես, ի՞նչպիսի բան է բոլոր մարդկացին սեռը, ի՞նչ շինեց ինձանից կեանքը և ի՞նչ շինեց կեանքը բոլոր մարդկութիւնից, որպիսի հիմքերից է ելանում իմ սեփական գործունէութիւնը, և որպիսի հիմքերից է ելանում բոլոր մարդկութեան գործունէութիւնը։ Մարդու նախասկզբնական զգայական դրութեան տկարութիւնը աստիճանաբար բերում է նրան դէպի գիտութիւն։ Գիտութիւնը տանում է նրան դէպի վաստակ, վաստակը՝ դէպի ստացուած, ստացուած՝ դէպի հասարակաց վիճակ, հասարակաց վիճակը՝ դէպի կարողութիւն և երեելի լինելը, թէ մէկը թէ միւսը՝ դէպի տէրութեան հապատակութիւնը, և վերջինները՝ դէպի ազնուականութիւնը և ստրկութիւն։ Այդ բոլոր հանգամանքները յայտնում, առաջ են բերում դրական օրէնքներ, իսկ այդպիսի օրէնքների պակասութիւնը տանում է դէպի կամեցողութիւն, բունակալութիւնը և ծառայութիւնը, դէպի ապօրինութեան դրութիւն։ բայց մենք գտնում ենք մեր մէջ մի տեսակ բնական բարութիւն, որի հետ սերտ կապուած է կրօնը։ Պեստալօցցին այդ հիմքերի վրա է կառուցանում մարդկանց հասարակութիւնը և նրան հետ

Ճշմարտութեան ու արդարութեան գաղափարները երեք տարբեր տեսակով, այսինքն՝ որպէս սկզբնական, բնական դրութիւն, որ հիմնուած է բնազդման վրա, որպէս հասարակաց դրութիւն և, վերջապէս, որպէս բարոյական դրութիւն Բնական դրութիւնը նրա կարծիքով կենդանական անեղծականութեան (չխանգարուած լինելու) վերին աստիճանն է։ «Այդ դրութեան մէջ մարդս իսկ իւր բնազդման երեխան է, որ անկեղծ անհոգութեամբ անձնատուր է լինում իւրաքանչիւր զգայական գուարճութեան։ Այդպէս և մարդս, որպէս նորաձին մանուկի, գուրս գալով բնութեան ձեռքից, ամեննեին անմեղրութիւնն է։ Այդպիսի դրութիւնը շարունակուում է մինչև որ նա չէ իմանում չարութիւն, առաջին սխալագործութեան հետ, առաջին մոլորութեան հետ նա արդէն իւր գայլով՝ անցնում է այն կէտը, ուր ընդհատուում է նրա բնութեան անեղծականութիւնը (չխանգարուածութիւնը), Այդ վայրկեանից, իւրաքանչիւր նոր մոլորութեան հետ, մարդս երեխայի նման հետզհետէ հեռանում է նախասկզբնական, բնական դրութիւնից մինչև անվախճանութիւնը։ \*)

Հասարակաց դրութիւնը, էապէս, բնական դրութեան սահմանափակութիւնն է. անհոգ վայելչութիւնը բնական դրութեան բաժինն է, յոյսը և համբերութիւնը ընդհանրական դրութեան բաժինն է, որովհետեւ բոլոր սօցիալական կեանքը հիմնուած է իրերը ներկայացնելու վրա, որոնք ներգործութեամբ չկան, Դա է՝ երևակայութիւն (պատկերացումն)։ Սեփականութիւնը, ստացուածը, զանագան պարապմունքները և դասակարգերը, օրէնքները — այդ բոլորն արուեստական միջոցներ են բաւակա-

\*) Այստեղ ակներեւ է, որ Պեստալօցցին բնկնում է Թուասուի մտքերի բնթացքի մէջ։

նութիւն տալու մեր զգայական բնութեանը, զգայական ազատութեան պակասութեան ժամանակ: Նրանց նպատակն է մեզ պահպանել և պաշտպանել սեփականութիւնը իրականացնում է մեր բնածին զօրութիւնը մեզ պահպանելու համար, օրէնքը և իշխանութիւնները ընդդիմանուա են մեր բնածին պաշտպանողական զօրութեան. ընդհանրական կեանքի մէջ մարդս ստիպուած է գործ ածել իւր այն մարմնական և հոգեկան զօրութիւնները, որոնցով բաւականութիւն են ստանում նրա առօրեայ կարիքները, դրծ ածել հոգու բոլոր միւս ընդունակութիւններից, ևս առաւել և, հետեապէս, նրանց վնասի համար:

«Դրանով խանգարուում են մեր բնածին կարողութիւնները, և այստեղից բղխում են մասնաւորական և միաբանական հոգու զանազան տեսակները. ազնուապետութիւն, միջակ գասալարդ, դիւանակալութիւն և այն: Բայց մեր բնութեան խորութեան մէջ ներգործում է մի այլ զօրութիւն, որ բղխում է ոչ զգայական բնութիւնից և ոչ սօցիալական դրութիւնից, այլ մարդուն յատուկ բարոյական զգայանքից»: Որպէս բարոյական էակ, ես զգում եմ իմ մէջ զօրութիւն, որովհետեւ ես ունիմ գոյութիւն, բայց ունիմ գոյութիւն նրա համար, որ նա ունի գոյութիւն: Ես կատարելագործում եմ ինքս ինձ, երբ այն, ինչ ես պէտք է անեմ, ընդունում եմ իբրև չափ այն բանի, ինչ բան կամենում եմ ես անել: Ես զգում եմ ինձ բարոյական զօրութիւն:

Միայն այդ, իմ բնածին եսականութիւնը զապելու և հոգու վերին պահանջներին հապատակեցնելու ճանապարհով ես կարող եմ վերականգնեցնել իմ ներքին ներգաշնակութիւնը: Բարոյականութիւնը գուտ անհատական բնութիւն ունի և չէ կարող պարունակել մարդկանց մէջ եղած չարաբերութիւններում: Ինչպէս ոչ ոք չէ կարող զգալ ինձ

համար, թէ ես կամ, այնպէս էլ ոչ ոք չէ կարող ինչ համար զգալ, թէ իմ խիզճը հանդիսաւ է: Զուտ բարոյական են ինձ համար միայն այն շարժառիթները, որոնք լիովին յատուկ են իմ անհատականութեան:

Որպէս բարոյական էակ, ես արդիւնք եմ իմ յատուկ կամքի. ես կարող եմ իմ գիտութիւններով ազնուացնել ու կատարելագործել ինքս ինձ և բաղդաւորել մարդկութիւնը: Գէպի հակառակ հետևանքներն է տանում գիտութիւնը, որպէս արդիւնք հասարակութեան,—բնականին հակառակ ճանապարհ, որով գնում է մեր մտաւող զարդացումը ճեմարաններում, լսարաններում ու ուսումնարաններում և որ ընդդիմաբանում է մեր ընտանեկան կեանքի կարիքներին: Միւս կողմից գէպի այլ պիսի իսկ այսանդակ հետևանքներն են տանում հակաբնական հալածանքները ընդդէմ մտաւորական և բարոյական կրթութեան. հալածանքները, որոնք կատարելապէս զանց են առնում աշքից ժողովրդի ընտանեկան բաղդաւորութեան հիմքերը: Այդ հակաբնական ձգտումը գէպի գատարկ բազմագիտութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից—հակաբնական հալածանքն ընդդէմ շահաւէտ և ամենահարկաւոր գիտութեան, տանում են ժողովրդական կրթութիւնը գէպի ալեւորուղ Եւրոպան, կամ գէպի մեր հիւանդու երևակայութեան գատարկ ցնորքը, կամ գէպի զարշահոտ ճահիճը, որով աղտեղլում ենք մեր տղեղ և զարդառեսիլ կենդանականութեան մէջ: Ճիշտ այդպէս է և կրօնը: «Որպէս իմ սեփական արդիւնք նա ճշմարտութիւն է: Որպէս արդիւնք ամբողջ հասարակութեան, նա վայրենի բնութիւն է արուեստական ջերմասենեակում (serre chaude) իւր ձեռքում գտնուած, բռնաւորական և կեղծաւորական գէնքով»:

Ուրեմն, ինչ եմ ես որպէս բնութեան արտադրու-

**Թիւն:** Մաքուր բայց կոպիտ և չմշակուած մարմար,  
իոր թաղուած իմ անսանականութեան մէջ, բայց  
որպէս անդամ հասարակութեան և որպէս անհատ՝ պար-  
գևատրուած մի այնպիսի զօրութեամբ, որով կարող է ա-  
զատուել իւր անսանական բնութիւնից և մշակուել երկու  
կերպ. մի կողմից հասարակութեան միջնորդութեամբ,  
միւս կողմից իւր միջնորդութեամբ:

Ի՞նչ էմ ես որպէս հասարակութեան արդիւնք: Բո-  
լոր հասարակական դրութիւնը հիմնուած է իմ նախեղակ  
պայական բնութեան փափոխութեան վրա և այդ դրու-  
թեան մէջ ինձ միապէս պակասում է որպէս բնածին կա-  
րողութիւնների նախապկզբնական ներդաշնակութիւնը այն-  
պէս և բարոյական կատարելագործութեան բնդունակու-  
թիւնը: Այդ դրութեան մէջ ես պարտաւոր եմ զոհել իմ  
մարդկութիւնը իմ հասարակական դրութեան:

Վերջապէս, ի՞նչ եմ ես որպէս արդիւնք իմ սեփա-  
կան անհատականութեան: Որպէս արդիւնք իմ սեփական  
անհատականութեան, ես պարտաւոր եմ հասնել ամենայն  
կատարելութեան, որին ես միայն բնդունակ եմ իմ բնու-  
թեամբ: Տիեզերքի շինութեան համար պիտանի է միայն  
լաւ մշակուած քար: Առանձին անհատների բարոյա-  
կանութիւնը սերտ կապուած է նրանց գգայական բնութեան  
հետ և նրանց հասարակական յարաբերութիւնների հետ,  
բայց բարոյականութեան գոյութիւնը բոլորովին հիմնը-  
ւած է իմ կամքի ազատութեան վրա, այսինքն իմ անձնա-  
կանութեան այն յատկութեան վրա, որի հետեւանքով ես  
խոստովանում եմ ինձ բոլորովին անկախ իմ գգայական  
չօժարութիւններից, կարողանում եմ յատկապէս նուիրել ինձ  
իմ սեփական կատարելագործութեան և ոչնչացնել իմ մէջ  
ներքին հակասութիւնները (հակառակբանութիւնները):  
«Ի՞նչարդ և Գերտրուդ», «Կրիստօֆ և Եղաս» հեղի-

նակութիւններում: Պեստալօցցին պարզ գոյներով նկա-  
րագրում է ժողովրդի խսկական դրութիւնը և ներկայա-  
ցնում է մի և նոյն ժամանակ ընտանեկան դաստիարակու-  
թեան գաղափարը, որ համաձայն է ժողովրդական կեան-  
քի և բնական յարաբերութիւնների խսկական դրութեան  
հետ: «Ես տեսաց ժողովրդի աղքատութիւնները, ասում է  
նա, ու կինհարդ և Գերտրուդան ցաւակցութեան հառա-  
չանքներ էին, որոնք պատճառեցին այդ աղքատութիւնները»: \*)

«Ամբողջ կեանքիս միակ խնդիրը ես դրի ժողովրդ-  
ութիւնը, որի վատարաղդութիւնը ես զգում եմ  
այնպէս, ինչպէս զգում են քչերը, որովհետու ես ծանօթ  
եմ նրա խեղճութիւնների հետ, ինչպէս ծանօթ են նրանց  
հետ քչերը: «Ի՞նհարդ և Գերտրուդան» առաջին միխ-  
թարական խօսքս էր խեղճերի և անօգնականների համար:  
Դա եղաւ իմ առաջին յորդորական խօսքը նրանց, որոնց  
աղքատները և անօգնականները Աստուծոյ տեղ են  
ընդունում: Դա եղաւ իմ առաջին յորդորական խօսքը զիւ-  
ղական մայրերին իրանց որդիների համար լինելու այնպէս,  
ինչպէս մարդկանցից ոչ մէկը չէ կարող լինել, բացի իրանցից»:

Այդ գրքում Պեստալօցին, Ռուսսովի նման, յայտ-  
նում է այն միտքը, թէ երեխայի գաստիարակութիւնը  
պէտք է սկսել նրա ծնուելու առաջին բոպէից: «Դեռ օրօ-  
րոցի մէջ, բացազնչում է նա, պետք է խվել դաստիա-  
րակութեան գործը կոյր անմիտ դէպքի ձեւքից և տալ

\*) Lienhard und Gertrude մեծ մանկավարժի այդ պատճու-  
թեան հարազատ թարգմանութիւնը կատարել է մեր նշանաւոր  
հոգևորականներից մէկը՝ Խորեն Եպիսկոպոս Ստեփանէն, որ իս-  
կապէս արժէ կարդալ: \*) Christopher ու Else.

1692-54



աւելի արուեստական ձեռք, որ հագարամեայ փորձից ուսել է բնութեան յաւիտենական օրէնքները»:  
 «Բնդհանուր կրթութեան կարևորութիւնը յատովէ քրորին՝ մկան օրորոցից: Առանց բաւականութիւն տալու նրան, տարրական կրթութիւնը չէ ունենում զլիաւոր կէտ՝ մեր բոլոր կարողութիւնները ամրապէս զարգացնելու և նրանց միմեանց հետ հաստատապէս կապելու համար: Եւ այդ ընդհանուր կրթութեան մէջ արուեստը, բնական զարգացման նման, պէտք է դուրս գայ մարդկացին բնութեան միութիւնից և միայն այդ ճանապարհով կարող է հասնել կապի և ներդաշնակութեան իւր հետեանքների մէջ»:

Ում կարող էր դիմել Պեստալոցին, եթէ ոչ մօրը, որին երեխան յատկապէս պատկանում է իւր կեանքի առաջին հասակում: Հասկանանք՝ որ առաջին հասակի ամբողջ դաստիարակութիւնը կախուած է անշաջող. կրթութիւնից աւելի ուշ տարիներում: Ես կամենում եմ ժողովրդական կրթութեան գործը յանձնել մայրեին»: Աչա այն գրքի հիմնական միտքը, որ պէտք է քննենք. Գերտրուդան, բարեսիրա, բացց թողլ կինհարդի կինը, ներկայանում է մօր օրինակ կամ գաղափար: Նրա տնտեսութիւնը և մանկավարժութիւնը կազմում են Պեստալոցու գաղափարը: Գերտրուդան բոլորովին նուիրուած է մայրենի սիրոցն, կարողանում է կենդանացնել իւր երեխայի մէջ կրօնի, սիրոց, յարգանքի և վարկի հիմքերը: Սիրով հոգս ու խնամք տանելով երեխայի վրա, նա զարթեցնում է նրա մէջ կեանք, նա կարողանում է՝ աճող և զարգացող երեխան յանկուցանել դէպի ինքը, դէպի տունը, դէպի մարդկութիւնը և, դէպի մարդկութիւնը սէր ունենալու հետ միասին, զարթեցնել սէր դէպի աստուածութիւնը: Նա ծանօթացնում է իւր երեխային դիտութեան տարրերի

հետ, առարկաների թուփ ու ձևի հետ և զարթեցնում է նրա մէջ գործնական կեանքի գործունէութեան սկզբունքները: Նա մինչև այն աստիճան մայրենի փորձնականութիւնունի, որ նրա հետ խորհրդակցում են գիւղական ուսումնարան կառուցանելու միջոցին: Բայց դրանից նա աշխատում է և հոգս է քաշում տան վրա առաւօտից մինչև երեկոյ: Եթէ ընտանեկան յարկը դադարում է սրբազն տաճար լինելուց, եթէ մայրը չէ գրգռում երեխային դէպի մտաւոր և բարոյական կեանք, ապա այնտեղ անկարելի է սօցիալական յարաբերութիւնների արմատական վերանորոգութիւն: Աչա Պեստալոցը համոզունքը, որ երեւում է նրա «կինհարդ և Գերտրուդա» գրքի մէջ:

Միայն թէ Պեստալոցը «կինհարդ և Գերտրուդայի» այդ հիմնական միտքը շատ ընթերցողներ չհասկացան, Պեստալոցը շրջապատողներից մի քանիսը կարդացած լինելով այդ գիրքը, ժողովրդական խանգարման աղբիւրը գտան միակողմանի և յատկապէս գիւղական կարողութիւնների մէջ: Այդպիսի թիւր հասկացողութեանը հեղինակն աշխատում էր ընդդիմադրծել այն գրքի մէջ, որ գրեց ձմեռժամանակ (1781—1782) «Կրիստօֆ և Էլգա» վերնագրով: Կրիստօֆի մի համեստ գերդաստանատիրոջ գիւղի առաջին դիւղացիներից մէկի ձեռքն ընկալ «կինհարդ և Գերտրուդա» գիրքը: Կարդացած լինելով նրան և դնելով դարեկի վրա աստուածաշնչի, աղօթագրքի և Խզէլինի հեղինակութիւնների կարգում, նա վճռեց երկրորդ անգամ կարդալ նրան իւր բարեկամների հետ, ձմեռացին երեկոները: Նրա կին կլզան, նրա մշակ չուստու, նրա երեխաները և ծառաները ներկայ էին գտնվում աշխատանքը ձեռներին այդ ընթերցանութեան ժամանակ, և լւղաբանչիրն անկեղծաբար յացում էր այն մտքերը և զգացմունքները, որ զարթեցրել էր նրա մէջ գիրքը:

«Ընթեկցող», ասում է Պետալօցին իւր հեղինակութեան սկզբում, «այս գիրքը մի փորձ է դասագրքի, որ նշանակրուած է մարդկութեան ընդհանուր ըէլալկան ուսումնարանի—ընտանեկան շրջանի համար»: Ամբողջապէս այս հեղինակութիւնը քայլ առ քայլ հետևում է «կինհարդ և Գերտրուդայի» բովանդակութեանը: Բոլոր առաջ բերած անձանց նախատելը և դիտարութիւնն է ուսում ու խրատ, և այդ նախատելին գոհ է բերած ամեն ինչ, մինչև անդամ ներգործող անձանց զգեստը: Եթէ իմ փորձը ձեռնտու լինի հասարակութեան շատ դասակարգերի յառաջադիմութեան համար ըէլալկան գիտութիւնների մէջ, ապա ես դրանից աւելի չեմ ցանկանաց: Միայն թէ այդ գիրքը, ինչպէս ասում է Պետալօցին երկրորդ տախագրութեան յառաջաբանում, յընկաւ ժողովրդի ձեռքը: Այն հայեցքները մանկավարժ ութեան վրա, որոնք տիրապետում էին ինձ շրջապատող ամենամօտ շրջանում, այս գրքի գրած ժամանակ բոլորովին ընդդիմաբանում էին սրա (գրքի) ուղղութիւններին: Այն ժամանակ ջանք էին անում բազմացնել անօգուտ գիտութիւնների միջոցները և անչափ շատացնում էին հրահանգների և դասագրքերի թիւը, որոնք լրուած էին այնպիսի գալրոցական գիտութիւններով: «Իմ գիրքն այդպիսի բան չէր ուսուցանում. նա միայն զարթեցնում էր նրա մէջ, հրահրուած էր գէպի նոր կեանք այն, ինչ որ ժողովուրդը իմանում էր առաջուց սեփական փորձով, ինչ որ նա ինքն արդէն խոստովանում էր և ինչ որ առաջ իւր ժառանգութիւնն էր», ես աշխատեցի ընդարձակել ժողովրդի տեղեկութիւնների շրջանը, ծանօթացնելով նրան իւր յատուկ դրութեան և իւր ամենամօտ շրջանի շրջապատողի հետ»: Այդպիսով գիրքը չունեցաւ այն յառաջադիմութիւնը, որ սպասում էր նրանից Պետալօցին և մնաց օտարութի ժողովրդի համար: Եւ իրօք,

առանձին ընտիր տեղերի հետ կարգով, կրքի բնաւորութիւնն ամբողջի մէջ անյաջող էր: Նրա մէջ կար կեանք և ազդեցութիւն, երկար խօսակցութիւնները ծանր և աշխատեցուցիչ էին, իսկ երեւելինները և գորեղները վիրաւորվում էին Պետալօցու կարծիքով՝ թէ շէների մէջ անենակն չէին լինի արու մեղուներ, եթէ նրանք չունենային իրանց նախատիպերը քաղաքային բնակիչների բարձրագոյն դասակարգերում և դասերում:

Այն միջոցին ֆրանսիական յեղափոխութիւնն ընդգրրկեց և զվացարիային ու խորտակեց հին ազնուապետական կիսով չափ ապականուած ձեւերը: Հին կանտօնական կառավարութիւնն ընկաւ և ամբողջ զվացարիան պէտք է ֆրանսիական ներդաշնակութեամբ դառնար մի անբաժան հասարակապետութիւն, հինգ վերատեսուչների կառավարութեան ներքոյ: Այդ վերատեսուչներից մէկը՝ Ար Գրան (Le Grand) Պետալօցու բարեկամն էր: Հէնյո դա էլ ուղարկեց Պետալօցուն, որի մէջ այն միջոցին հասունացած էր «դպրոցական ուսուցիչ լինելու» միաբը ֆրանսիացիների աւերած Ստանց դղեակում, ուր Պետալօցին հաւաքեց իւր շուրջը «անցեալ պատերազմում սպանուած շվեցարացիների» որբացած զաւակներին: Զուտով Պետալօցին բնակուեց կարօտութեան և հոգերի մէջ, Ուրսուիննեան մենաստանում, շրջապատած ութսուն սաստիկ սոսպեցած երեխանների խմբով: «Առաւտից մինչև երեկոյ ես նրանց մէջն էի», պատմում է նա իւր «Պետալօցին Ստանցում» և «Գերտրուդա» հեղինակութիւններում, «և մասնակից էի անում նրանց կերակրիս: Ես ամենից աւելի վաղ էի զարթնում և ամենից աւելի ուշ էի մտնում անկողին: Ես հոգս էի քաշում ցաւագարների վրա, իմ արտասուբքները խառնվում էին նրանց արտասուբքների հետ, նրանց ժպիտը երջանկացնում էր ինձ»:

Հոգսերի վրա աւելացաւ այդ երեխաների ազգական-ների դժոհութիւնը, երկիւղը՝ թէ նա, որպէս հերետիկոս, կրկորցնէ նրանց հողիները: Նրա սեփական անհմտութիւնը դպրոցական գործի մէջ որի հետևանքն այն եղաւ, որ նա պէտք է ինքն իւր համար հնարել էր ուսուցանելու մետոդ, ստիպեց նրան մտածել մատակարարութեան միջոցներին և նպաստներին հասարակ ձև տալու մասին: Նրա խորամիտ միտքը գտաւ նրանց և նրա դէպի մարդկութիւնն ունեցած սաստիկ սէրը յաղթեց բոլոր արգելքներին: Իսկ այսոեղ մեծ և զօրաւոր գիւտեր գործեց այն գօրութիւնների քանակութեան և աստիճանի վերաբերութեամբ, որոնք ընդհանրապէս յատուկ են մանկական հասակին, և այն քանակութեան և էութեան վերաբերութեամբ, որ ինչ հնարաւոր և կարեոր է ժողովրդական կրթութեան համար:

Ստիպուած լինելով ուսուցանել երեխաներին միայնակ, առանց օգնականների, Պեստալոցցին մտածեց ուսուցանել շատերին միաժամանակ, բարձր ասելով և ստիպելով աշակերտներին խմբով կրկնել ասածը: Աերջինս տակտ դարձաւ և այդ տակտը զօրեղ կերպով տապարում էր երեխաների մտքի մէջ ասածը: Հէնց այսոեղ նա խմացաւ, թէ ինչպէս կարեոր է նախասկզբնական մատակարարութեան ժամանակ գործը հայսնել կատարելութեան մինչև յայտնի աստիճանի և նկարչութեան, վայելչադրութեան միջնորդութեամբ զարգացնել ուսանողների մէջ ինչպէս դիտողականութեամբ ստացած պատկերները, այնպէս և գեղեցկութեան ու կարգի զգացմունքը: Հէնց այսոեղ տեսաւ նա, «ինչպէս սեփական գօրութեան և ընդունակութիւնների խոստովանութիւնը զարթեցնում է երեխաների մէջ ուրախ հոգեկան դրաբարթութիւն և խրախոյ

Է տալիս նրանց դէպի նորանոր յառաջադիմութիւններ, ինչպէս անսպացման հարկաւոր է երեխաների մէջ հաստատուն րէալական գիտութիւնների պաշար դնել և զարդացնել նրանց լեզուն առաջ, քան թէ նրանք կրսկւեն ուսանել գրագիտութիւն»: Այդ ճշմարտութիւնների վրա մինչև այն ժամանակ կասկած անգամ ըշին տանում նախասկզբնական վարժարանները: «Ես խնդիր դրի ինձ համար», ասում է Պեստալոցցին, «Ժողովրդական կրթութիւնը հիմնել հոգեբանական սկզբունքի վրա, դնել իբրև հիմք նրա դիտողութեամբ ստացած իրական գիտութիւնները և կորզել նրա անհիմն բառագիտութիւնը ոչնչութեան վրայից: Ես զգացի, որ կարող եմ յացտնել մարդուն այդ ծրագիրը խորին հայեցուածքով իրերի վրա և անկողմնապահութեամբ: Բայց կարճատես և կողմնասէր ամբովին, որ նման է այն սագերին, որոնք դուրս գալով ձուերից, կերակրվում են ալսուում ու խոհանոցում և որի հետեանքը լինում է այն, որ կորցնում են թոշելու և լողալու ընդունակութիւնը: Այդ կարճատես ամբովին ես զգարողացաց մեկնել իմ ձգտումը»:

1799 թուին ֆրանսիացիները արտաքսեցին Պեստալոցցուն մենաստանից, և նա ստիպուած էր ուղարկել երեխաները իրանց ազգականներին: Ուժի չափազանց լարողականութիւնից \*) նրա զգերը խանգարուել էին. նա փորձեց մարդու դրութիւնը նաւաբեկութիւնից յետոց, և զիմարներն ամենայն դէպքում ծաղրում էին նրան, ինչպէս ձաղրածութեան են տալիս ամենայն գործ, որ խորսակիում է արգելքներից, որոնց յանձնառուն զարդարութեան հոգեացնել: Հուրնիհէլում նրա առողջութիւնը

\*) Ո՞ր բան զոհեր է պահանջում մարդկութիւնը իւր վերին նպատակներին հասնելու համար...

շուտով վերականգնեց, և նա նոր դօրութիւններով սկսեց կատարումն տալ իւր մեծահոգի դիտաւորութիւններին, սկզբնական ուսուցչի յատկութեամբ Բուրգդօրֆում (Բէրնի կանոն):

Ոչինչ բանի չհարկաւորուեց և այն հանգամանքը, որ դիտայի Աֆֆիրին մի անդամ յայտնեց, «Պեստալոցցով փառքը մեզ վրա պարտականութիւններ է դնում, և եթէ մենք մասնակից յինինք նրա գործին, ապա կարող են ամել. «Ճվէցարացիները բուրգունդական այմազը ծախեցին արծաթի կշռով (ծանրութեամբ)»: Միջ մասը նայում էր Պեստալոցցով վրա, որպէս «գարոցական ուսուցիչ-արուեստագործ վրա, որ ջանք է անում նրա համար, որ մի կտոր հաց աշխատէ իւր համար»: Վերջապէս 1801 թուլին նրա տնօրինութեան յանձնեցին Բուրգդօրֆ հնացէն դղեակը: Այստեղ նա կարողացաւ հիմնել իւր սեփական կրթարանը և այստեղ նա անցյեց իւր կեանքի ամենաերջանիկ և երանելի ժամանակը: Մի անխոնց և քրտնավաստակ գործունէութեան սկիզբն դրուեց: Պեստալոցցով հետ միացան շատ հմուտ մարդիկ: Մատակարարութեան առարկաները մետոդիքաբար մշակուեցան Պեստալոցցով սկզբունքների համաձայն: Նա ինքն անդադար աշխատում էր, լցնում էր ամերող թերթեր վանկերով, թուանշաններով և այլ կարգերով, ջանք էր անում բոլոր զօրութիւններով հետազոտել տարրական հիմքերը, բացատրել նրանց ամենամեծ պարզութեամբ և ապա կատարելապէս միաւորել և կապել նրանց միմեանց հետ: «Հազար անդամ», ասում է նա, «կարծում էի, թէ մօտեցել եմ նպատակիս, բաց չգտնելով ոտներիս տակ հաստատուն հող, ես առանց համբերութիւնս կորցնելու, որից սկսում էր իմ հետազոտութիւնները»: Եւ Պեստալոցցին յառաջադիմութիւն ունեցաւ իւր գործի մէջ, որով-

հետև առաջ էր տանում նրան ոչ թէ մեքենայաբար, այլ խորին մտքով, որովհետև ունէր այն սէրը, որ չէ յոգնում արգելքներից Այզպիսով նա շուտով գտաւ այն օրէնքները, որոնցով մեր հօգին ստանում է պահպանում է արտաքին տալաւորութիւնները, նա իմացաւ, որ միայն ուսումն ու գաստիարակութիւնը պէտք է օդնեն բնական գարգացման, իսկ մատակարարման արուեստը պէտք է իսկապէս հիմնուի «Երեխացական մտքերի յարմարութեան և աստիճանաբար ընթացող կարգի վրա, այնպէս որ ուսուցման սկզբն և հեռագոյն ընթացքը ուսանողների կարողութիւնների գարգացման հետ գուգահեռաբար ընթացող կարգի ուսումնաասիրութիւնը Պեստալոցցով դիմաւոր լինդիրն էր: Ճուտով նա արեց այն գիտը, թէ փոքրահասակ երեխաները ցոյց են տալիս չափազանց գտումն՝ ծանօթանալու այն առարկաների հետ, որոնք նրանց առաւել մօտ են, և շուտով ստանում են սովորութիւնն որոշակի արտայատելու իւրեանց մտքերը նրանց վրա, թէ բոլոր վերացական համակացութիւնները դառնում են բառերի դատարկ ժողովածու, եթէ չեն հիմնուած դիտողութեամբ ստացած պատկերների վրա և թէ այդ պատճառով զիմաւոր նպատակը պէտք է լինի զգայի առարկաների քննութիւնը և ոչ թէ գրագիտաութիւնը, գրութիւնն ու թուաբանութիւնը:

Այս պատճառով Պեստալոցին պահանջում է նպին որ ուսումնակից այն ժամանակից սկսելով, երբ երեխան գտնվում է մօր վերատեսչութեան ներքոյ, տարերեխային կարողութիւնն ընդունելու զանազան զգացմունքներով այն տպաւորութիւնների խառն մասսան, որոնց ներկայացնում է բնութիւնը, և որ նա այդ խառն (անկարդ) մասսայում ընտելանար զանազաններու առարկաները, բաժանելու նմանը, միասեւը այլասերից: Երկրորդ՝ որ երեխայ-

կան դիտողութեան ցրջանը հետզհետէ առաւել և առաւել ընդարձակուէր: Երրորդ՝ որ այն պատկերները, որոնք հասած են մինչև երեխաների ընդունելը, տպաւորուէին նրանց մտքում որոշ պարզութեամբ և ներդաշնակաւոր կարգով և որ այդ պատկերներին ընծայուէր պատշաճաւոր նշանադրութիւն, անուն: Երեխայի մտքում ամրապիս տպաւորուած այդպիսի պատկերներից իւրաքանչիւրի հետ, մեջ գիւրութեամբ և գրեթէ ակամայաբար միանում է համապատասխան պատկերների և նրանց ազգակից հասկացողութիւնների ամբողջ կարգը: Բայց այդ ժամանակ զիսաւոր գործը նրանումն է, որ զանազանուի իրերի անփոփոխ գոյութիւնը նրանց փոփոխուող յատկութիւններից և դրութիւններից (նրանց պատահական արտաքին երևոյթից), որոնք սխալանքների և մոլորութիւնների աղբեր են կազմում, նուևանել այդ պատահական նշանները էականներին և ամենայն տեղ պարզից անցնել դէպի բարդը: «Ամենայն, մինչև անգամ խիստ շատ մասերից բաղադրուած պատկերը բաղկանում է ամենահասարակ հիմնական մասերից, եթէ դու ըմբռնեցիր վերջիններս, ապս բարդը քեզ համար շատ պարզ կը իմինի»:

Քննելով մանրամասնօրէն, ինչպէս վարվում է այն մարդը, որ ցանկանում է բացատրել իրան որ և իցէ իրթին և իւր համար կնճռուած առարկաց, Պեստալոցցին կանգ առաւ հետևեալ երեք կէտերի վրա: 1) Ո՞րքան առարկաց է գտնիում մարդու առջև (թիւ): 2) Ո՞րպիսի արտաքին կերպարանք և գծագրութիւն (ձև) ունին նրանք: 3) Ի՞նչպէս են անուանվում նրանք, ինչպէս ենք նշանակում նրանցից իւրաքանչիւրը մեր ձայնի հնչյունների միջնորդութեամբ (լեզու, խօսք, հնչյւն): Անուան Սմեն առարկայի մէջ կարելի է զանազանել թիւ, ձև և անուն: Մնացած յատկութիւններն առարկաների ընդ-

հանուր սեփականութիւնը չեն կազմում: Այդպիսով մատակարարութեան զիսաւոր գործը Պեստալոցցին տեսաւ նրանում, որ երեխան ընդունէր (իւրացնէր) իւրաքանչիւր առարկան բատ նրա ձեի ու թուի և վերջապէս ծանօթանար նրա ճանաչած բոլոր առարկաների անունների հետ: «Այդ երեք կողմերը», սատում է նա, «դիտութեանը որոշութիւն են տալիս, միւս մնացած կողմերը առաւել և առաւել պարզեցնում են նրան»: Բացատրելով աստիճանաբար ընթացող կանոնաւոր կարգով մատակարարութեան այդ երեք տարրը՝ թիւը, ձեր և բանը, Պեստալոցցին չօրինեց իւր դիտողական ազբբէնարանը: Դրա համար նրա օգնական եղան ճանաւանդ չառւըր, Կրիւզին և Ջմիդտը, և որովհետև այդ առարկան խիստ կերպով կարող էր անցած լինել աստիճանաբար, որովհետև նրա պրակտիկային յարմարուելը հիանալի հետևանքներ ունեցաւ և որովհետև այդ հետևանքները կարող էին աւելի պարզ լինել օտարների համար, ապա նրանք շուտով ուսումնարանին յատկացած սեփական կարծիք դարձան, այն ինչ այն երկար—լեզուի դիտողական ուսումնը, որի վրա աշշատում էր Պեստալոցցին և, մանաւանդ Կրիւզին, յետին Տրագիրն էր կազմում: Պեստալոցցու մեառղը, սրանով ուսուցանում էր համարդական և ծաւալական յարաբերութիւնները, որոնցից վերջիններս կրկին բաժանվում էին երկուտիւնների ուսումն (Formenlehre) և տարածութեան ուսումն (Raumlehre), նկարութեան և վայելչագրութեան հետ միասին, երեաց փորձով լաւագոյն միջոց՝ զարթեցնելու մատեմատիքական ընդունակութիւն՝ միտքը սրելու ևայլն: Նա նոր ճանապարհ գտաւ և հեռացրեց այն նախապաշտամունքը, որպէս թէ մատեմատիքան ուսումնասիրելու համար մի առանձին ընդունակութիւն է հարկաւոր: Ակներև է, որ գէթ մի յաբտնի աստիճան

պահանջվում է միայն առողջ մարդկացին հանձար և պատշաճաւոր աստիճանականութիւն մատակարարութեան մէջ, որ երեխաներն ինքնուրոցնաբար և ինքնագործումէաբար անցնէին մի աստիճանից դէպի միւսը: Իւր՝ միտք գարգացնող զօրութեամբ թուաբանութիւնը և երկրաչափութիւնը խիստ մեծ և կարևոր նշանակութիւն ունին ոչ միայն տղաների համար, այլ և աղջիկների համար, ընդդիմագործելով վերջիններիս աւելորդ շուտափութեան և անմտադրութեան, բաց այդ միջոցին պէտք է փախչել բոլոր արուեստագիտական բառերից, նշանակներից և այն և մանաւանդ սկզբում պէտք է առարկային աւելի դիտողութիւն (սարդարութեան) տալ: Յարաբերութիւնների մասին տարածութեան մէջ՝ իրեւ հիմք կարող է լինել քառակուսին: Հասկացողութիւնները թուերի վրա երեխաների համար պէտք է դիտողական անել կէտերի միջնորդութեամբ, դասաւորելով նրանց ըստ միաւորների, տասնաւորների, հարիւրաւորների և այն և կազմելով նրանցից թուաբանական աղիւսակներ ստիպելով գծագրել կանոնաւոր քառակուսիներ և բաժանել նրանց զանազան մասերի, Պեստալօցցին նկատեց, որ դա լաւագոյն միջոց էր երեխաներին պարզ հասկացողութիւն տալու կատորակների վրա: Ացդպիսի աղիւսակ Պեստալօցցին ունէր երկու հատ:

Ացդպիսով Պեստալօցցին յըս ունէր հասարակ ձև տալ ուսանելու համար բոլոր կարևոր միջոցներին և գործիքներին մինչև այն մասիճան, որ ամենայն հասարակ մարդ կարողանար ուսուցանել իւր երեխաներին, և ացդպիսով սակաւ առ սակաւ ուսումնաբանն անել անպիտան սկզբնական կրթութեան համար: Այդ դիմաւածում նա դարձեալ աչքի առաջ ունէր մանաւանդ մատէրիաները: «Ինչպէս մայր տալիս է երեխային սկզբնական ֆիզիքական կերա-

կուր, այդպէս և նա պարտաւոր է՝ համանայն բնութեան օրէնքների տալ նրան սկզբնական մտաւոր կերակուր, և ես շատ կարևոր եմ համարում այն չարութիւնը, որ առաջ է գալիս նրանից, որ երեխաներին խիստ վաղ են ուղարկում ուսումնարան ուսանելու այն չափազանց արուեստական եղանակները (որիմբ), որոնց ենթարկվում են նրանք տանից դուրս: Փոփոխութիւնը կըթեթևանայ, երբ մենք կըթեթևացնենք ուսումը մինչև այն աստիճան, որ իւրաքանչիւր մայր կարողանայ առանց կողմնակի օգնութեան ուսուցանել և մի և նոյն ժամանակ կատարեալ գործուել ուսանելով ինքը»:

1801 թուին Բուրդգօրինում Պեստալօցցին դրեց իւր երեւելի հեղինակութիւնը՝ «Ի՞նչպէս է ուսուցանում Պետրուդան իւր երեխաներին», որ մի փոքր է մայրերին խրատելու, թէ ինչպէս պէտք է ուսուցանեն իրանց երեխաներին: Նա մեկնեց այդ գրքում իւր մետողի հմաքերը: Մայրն ուսուցանում է երեխային այն վայրկեանից, երբ նրան իւր գիրկն է առնում: Նա հաւորում է նրա զգացմունքներին այն, ինչ բնութիւնը ներկայացնում է անկարգ ցրուած մեծամեծ հեռաւորութիւններով: Այդ միջոցին մայրն զգայական հայեցողութիւնը անում է ախորժ և հետաքրքրական երեխայի համար: «Չստանալով կրթութիւն և կուրօրէն հետեւելով ընութեան, մայրն իւր անմեղութեամբ չէ իմանում, թէ ինչ է անում: Նա կամենում է միայն հանգտացնել երեխային, նա կամենում է զբաղեցնել նրան, և այն միջոցին նա ներգործում է բնութեան ցուցման համեմատ, ինքն այդ չիմանալով: Բնութիւն խիստ շատ բան է կատարում մօր միջնորդութեամբ: Նա բաց է անում երեխայի առաջ ամբողջ աշխարհը, ընտելացնում է երեխային գործադրելու իւր զգացմունքները և վաղ զարգայնում է նրա մէջ զննողականութիւնը»: Պեստալօցցին ցանկանում է, որ վարուէին

դարդայման այդ բնական ընթացքի համաձայն և որ այն, ինչ երեխաների մէջ կատարվում է առաջին հասակում անդի- տակական յօժարութեամբ, հեռագոյն հասակում, հօր ձեռ- բածութեան ներքոյ կը կատարէին ազատորէն դիտակցաբարո- Յաշտնի է, որ ապենցէլեան կանացքը երեխայի կեանքի առաջին շաբաթից կախում են նրա օրօրոցի վրա պարզ գոյնաւոր թղթից շինած թուչուն, որ տպաւորու- թիւն է գործում երկու և երեքաբաթական երեխաների վրա: Վերջիններս մեկնում էին դէպի նա իրանց թաթիկ- ները և ոտիկները: Գեստալոցցին խորհուրդ է տալիս մաշ- րերին վարուել ապենցէլեան կանանց նման և առաջ է գնում, պահանջելով, որ մայրերը ջանացին բոլոր զօրու- թիւններով ուղղել երեխայի ուշադրութիւնը դէպի առար- կաների էական կողմերը, թողներով մի կողմը բոլոր պա- տահականը:

Մարդու գդայական (չսահմանափակ առաջարկություն) կազմութիւնը, էապէս, ստորագրուած է նոյն իսկ օրէնք- ներին, որոնց ենթարկուած է և ֆիզիքական բնութիւնը: Այդ օրէնքներով մատակարարութիւնը պէտք է մկի խիստ էականից, ապա աստիճանաբար անցնի դէպի աւելի քիչ էականը և այդպիսով առարկավ բոլոր մասերի մէջ ձգի մի կենդանի կապ: Այն օրէնքները, որոնց ենթարկուում է մարդու բարոյական զարդացումն ըստ իւր հոգեկան բնու- թեան, որ պէտք է միատեսակ լինին ֆիզիքական զգայա- կան բնութեան օրէնքների հետ, հետևալներն են: 1) Պէտք է ուսանիլ կարգի բերելու իւր գդայական յանդիմանութիւն- ները (պատկերները) և լիովին իւրացնել ամենահասարակ- ները առաջ քան դէպի աւելի բարգերը անցնելը: Իւրա- քանչիւր արուեստի մէջ պէտք է հասնել այնպիսի կարգի, որ ամեն մի նոր հասկացողութիւն ներկայացնէր միայն փոքր և զրեթէ անսկատելի յաւելուած այն բանին, ինչ

որ արդէն իւրացրած էր նախապէտ: 2) Պէտք է մտարերել բոլոր իրերը, որոնք էական կապ ունին միմեանց հետ, իսկ և իսկ այն կարգով, որպիսի կարգով ներկայա- ցնում է իրական բնութիւնը: Իւր ներկացացուցման մէջ ենթալրել բոլոր չէականը (անէականը) էականի և չտալ ոչ մի առարկային պատկերացուցման մէջ աւելի մեծ նշա- նակութիւն, քան լինչպիսի նշանակութիւն որ ունի մարդ- կութեան համար բնութեան մէջ: 3) Աշխատել տալ առաւել ազգեցութիւն և պարզութիւն խիստ կարևոր առար- կամերի տպաւորութեան, արուեստաբար բոլորովին մօտե- ցնելով նրանց զգացմունքների հետ: Զպէտք է զանց առնել ֆիզիքական կազմութեան օրէնքը, որով բոլոր տպաւորու- թիւնների յարաբերական զօրութիւնը կախումն ունի նրանց զանազան հետաւորութիւնն ունենալուց զգայա- րանքներից: Զպէտք է մոռանալ, որ այդ բոլորը մեծ ազ- գեցութիւն ունի մեր դրութեան, մեր պարտաւորութիւնների և նոյն իսկ բարեգործութեան մասին ունեցած հաս- կացողութիւնների վրա: 4) Ինչպէս ֆիզիքական բնութիւնը միաւորում է, ըստ երեսովթիւն, այլասեռ տարրեր մի և նոյն նպատակին հասնելու համար, այդպէս և ուսուցանելու արուեստը պէտք է լինի հասած մինչև ֆիզիքական ան- հրաժեշտութիւնը, այնպէս որ բոլոր գործերը և մինչեւ անդամ ըստ երեսովթին ամեն տեսակ միջոցները պիտանի լինէն՝ մի գլխաւոր նպատակի հասնելու վերաբերութեամբ: 5) Բայց տպաւորութիւնների զանազան կերպութիւնը և բազմակողմանի լինելը արտադրում է (առաջ է բերում) այն, որ ֆիզիքական կարերութեան հետևանքները կրում են իրանց վրա ազատութեան և ինքնուրոյնութեան կնիքը: Դրա համար, հասցնելով արուեստի և մատա- կարարութեան հետևանքները մինչև անհրաժեշտու-

թիւնը \*) պէտք է աշխատել՝ տպաւորութիւնների պէսպէսութեան մէն բազմակողմանիութեան միջնորդութեամբ տալ նրանց ռազմագութեան կ ինքնուրոցնութեան նոյն իսկ բնաւորութիւնը:

Այդ ենթագրութիւնները երեք տեսակ աղբիւրից են առաջ գալիս. նախ նոյն իսկ բնութիւնից, որի համաձայն մեր միտքը մութ ներկայացուցութիւններից, (պատկերներից) համում է մինչև պարզ հասկացողութիւնները. երկրագութիւնը մարդկացին բնութեան զգացական կողմից, որի հետ կապուած է ներկայացուցման ընդունակութիւնը. երրորդ՝ այն յարաբերութիւնից, որ գտնվում է իմ արտաքին դրութեան մէջ և իմ գիտողական ընդունակութեան մէջ:

Եւ այսպէս, ամենայն ուսում պէտք է սկսել գիտողականութիւնից (հարցադիօստե), զգացական հայեցողութիւնից, ցոյց տալով աշակերտին արտաքին առարկաները. «Եթէ» ես հարցնում եմ ինքս ինձ, ասում է Պետաղօցին, «թէ» ես ինչ էական բան արեցի մանկավարժութեան համար, ապա գտնում եմ հետեւալ պատասխանը. ես մատակարարութեան գլխաւոր օրէնք շինեցի դիտողականութեան սկզբունքը և, մերժելով առանձին ուսումնարանական առարկաները, ջանացի գտնել մատակարարութեան էութեան (իսկութեան) համար հիմնական ձև, որ նոյն իսկ բնութիւնից նախանշանակած է մարդկացին սեռի գարգացման համար». բայց այլ գիտողականութիւնը՝ որից սկսում է ուսանելու համար իւրաքանչւր կարեւը առարկան և դէպի որը նա վերստին դառնում է, կրաւորական յարաբերութիւն չէ դէպի առարկաները, այլ ինքնուրոցն ընդունելութիւն (Յօսպրիալի):

\*) Այսինքն՝ ամենահարկաւորը կացուցանելով

Հէնց որ նարդու գործարաններն սկսում են արտաքուստ տպաւորութիւններ ստանալ, մկնարկում է և նրա ընդունակութիւնների զարգացումը: Զանազան վարժութիւնների օդնութեամբ, որոնք կարգաւորուած են հոգեբանական կշռագատութիւնների հիման վրա, երեխանների գիտողաբար ծանօթանալու միջոցին արտաքին առարկանների հետ պէտք է տալ առանձին արուեստի նշանակութիւն, որ առաջ կը բերէր երեխանների մէջ բարոյական գեղեցկագիտական վերացական հայեցողութիւններ: Պէտք է վարժել երեխաններին նկատողութեան մէջ, էականի հաւատարիմ խրացուցման և որոշման մէջ ու ջանայ խոչընդուռ լինել անուշադիր և հարեւանցի նկատողութեան: Յանդիմանութիւնները, որոնց հասուցած են մինչև երեխացի խոստովագութիւնը (գիտակցութիւնը), պէտք է պարզութեամբ և ճշտութեամբ լինեն տպաւորուած նրա մտքում: Դրա համար, ուսուցանելիս զինաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել նրա վրա, որ երեխան տեսնի առարկանները ոչ թէ մառավայրապատ հեռաւորութեան մէջ, այլ պարզ մերձաւորութեան մէջ, և որ առարկաններից ընտրուէին ոչ թէ նրանք, որոնք որ և է բանով խոտորվում են չափից, այլ խիստ որոշ յատկութիւն ունեցողները: Առարկացի քննութիւնից յետոյ գալիս է անմիջապէս նրա անունը: Անունից անցնում են դէպի յատկութիւնների սահմանը, վերջապէս, առարկացի մանրամասն նկարագրութիւնից մակարերվում է նրա ճիշտ սահմանը, պարզ հասկացողութիւնը նրա մասին: Այդ վերջին նպատակն ամենայն ուսման էական կախուած է բանական ձեռքածութիւնից գիտողական (հարցադիօս) հայեցողութեան ժամանակ: Վերացական սահմանումները, որոնք զրկուած են նեցուկից գացական հայեցողութիւնների մէջ, առաջնորդում են դէպի անհիմն և անհաստատ գիտութիւնը, որ

փոքր շօշափման միջոցին քակտվում է սարդի-ոստայնի նման:

Առարկայի բոլոր արտաքին յատկութիւնների գումարը միանում է նրա ձևի հետ նրա թուական յարաբերութիւններում և ընտելանում է մեր գիտակցական խօսքի միջնորդութեամբ: Այդ երեակ հիմքից պէտք է դուրս գայ ուսուցման արուեստը: Նա պէտք է ձգտէ դէպի այն, որ նախ՝ երեխաներն ընդունէին իւրաքանչիւր առարկան, որ ներկայանում է նրանց արտաքին զգայարանքներին, ինչպէս մի անկախ միութիւն, բացի այն բոլոր իրերից, որոնք ըստ երեսոցին միացած են նրա հետերականութեան մէջ: Երկրորդ՝ որ ճանաչեն իւրաքանչիւր առարկայի ձևը և նրա թուական յարաբերութիւնները, և երրորդ՝ որ նրանք որքան կարելի է աւելի վաղ ժանօթանային բոլոր բառերի և այն առարկաների անունների հետ, որոնք նրանց ժանօթ են: Ամենայն մատակարարութիւն պէտք է դուրս գայ այդ երեք տարրական հիմքերից, և մանկավարժական արուեստի առաջին աշխատութիւնները պէտք է ուղղած լինեն դէպի այն, որ ամենամեծ հոգեբանական տակտով զարդացնենք և ամրայնենք երեխաների մէջ հաշուողութեան, չափելու և խօսակցութեան ընդունակութիւնները, որոնց վրա հիմնուած է բոլոր զգայական առարկաների գիտութիւնը, և ամենահասարակ ձև, աստիճանականութիւնը ու ներդաշնակութիւնը տալ այն միջոցներին, որոնք անշուշտ հարկաւոր են այդ երեք կարողութիւնների զարգացման համար:

Ամենայն գիտութիւն բղասում է երեք տարրական կարողութիւնից: ա) ճայնից, որից առաջանում է խօսակցութեան ընդունակութիւնը, բ) հայեցողութեան գուտ զգայական ընդունակութիւնից, որից առաջանում է բոլոր ձևերի ներկայացնելը և գ) ներկայացնելու ընդունա-

կովթիւնից, որ զգայականութեան սահմաններից արդէն դուրս է գալիս: Հէնց նրանից է բղսում միութեան պատկերացումը և նրա հետ միասին զանազան թուերի ներկայացնելը:

Զայնի վրա են հիմնուած մատակարարութեան հետեւեալ առանձին ճիւղերը, ա) ուսումն ձայնի (Tonlehre) կամ խօսակցութեան օրգանի զարգացնելը, բ) ուսումն բառերի (Wortlehre) կամ առանձին առարկաների ճանաչելը և գ) ուսումն քերականութեան (Sprachlehre) կամ իւր մտքերի արտացայտութիւնը:

Զայնի ուսումն բաժանվում է երկուսի: Ուսումն լեզուի ձայնների և երաժշտական հնչյունների (Երգի) միջոցով: Ինչ վերաբերում է լեզուի ձայններին, ոչ մի կերպ չէ կարելի թողնել դիպուածի կամքին այն հանգամանքը՝ թէ ժանօթանում են արգեօք նրանց հետ աշակերտները վաղ կամ ուշ վորդը կամ մեծ քանակութեան մէջ ներկայակութիւնը, և արտասանութեան այդ ընդունակութիւնը պէտք է, իւր կարգով, զարգանայ նրա մէջ առաջ, քան նա կը ձեռնարկէր տառերի ուսումնասիրութեան և առաջին վարժութեան ընթերցանութեան մէջ: Թրահամար, այբբենարանը պէտք է բովանդակէ իւր մէջ լիակատար պարունակութեամբ բոլոր ձայնները, որոնցից կազմվում է լեզուն, և այդպիսի այբբենարանի օգնութեամբ պէտք է օրօրոցից ընտելացնել երեխաների լսելիքը լեզուի բոլոր ձայններին, մինչև որ նրանք կատարելապէս կը տպաւրուին նրանց շիշողութեան մէջ, և առաջ, քան երեխան կը կարողանայ ինքն արտասանել այդ ձայնները:

Ուսումն բառերի կամ անունների (Buch der

Մայրի կարծիքով՝ կայանում է նրանում, որ ծանօթացնում են բնութեան և արուեստի ամենազլիսառը պոարկաների անունների հետ (մանաւանդ այնպիսիների, որոնք ինչպէս առաւել ընդհանուր տեսական առարկաներ, ամփոփում են իրանց մէջ մասնաւոր տեսական առարկաների ամբողջ կարգեր), բնութեան երեք թագաւորութիւնների, պատմութեան, աշխարհագրութեան, մարդկացին հասարակական կեանքիցև այն առնուած ամենազլիսառը պոարկաների անունների հետ:

Ուսումն լեզուի միջոցով իւր վերջնական նպատակով խառնվում է բոլոր դժուողական ուսուցման նպատակի հետ: Աեղուի վերջին նպատակը՝ կայանում է նրանում, որ մթին, շփոթ յանդիմանութիւններից (ապակերացումներից) բերէ մարդկացին սեռը գէպի պարզ, որոշ հասկացորութիւնները: Այն միջոցները, որոնցով լեզուն աստիճան առ աստիճան առնում է մեզ գէպի այդ նպատակը, ներկայացնում են հետեալ աստիճանուած կարգը. 1) մենք պէտք է ճանաչնենք առարկան ընդհանրապէս և անուանենք նրան որպէս միութիւն—առարկայ, 2) մենք աստիճան առ աստիճան զանազանում ենք նրա մէջ նշաններ և տալիս ենք նրանցից իւրաքանչիւրին առանձին անուն, 3) լեզուն տալիս է մեզ կարողութիւնը բայց իւր աճականների օգնութեամբ, աւելի ճիշտ որոշելու այդ յատկութիւնները և արտայացտելու փոփոխութիւնները առարկաների դրութեան մէջ նոյն իսկ բառերի փոփոխմամբ և նրանց զանազանակերպ միաւորութեամբ: Այդ բոլորի մէջ պէտք է վարժեցնել երեխաներին գործնականապէս:

Երկրորդ տարրական հիմքն է ձեւը, որից ելանում է և պէտք է ելանէ ամէն մի դիտութիւնն և, հետևապէս, ամէն մի մատակարարութիւնն: Առարկաների ձեւի վերաբերութեամբ պէտք է երեխաների մէջ վարժել աչքի չափը

(այն չափը, որ մարդու խմանում է աչքերով): Բերել դէպի աւելի պարզ խոստովանութիւնը՝ զանազան ցարաբերութիւնները, որոնց խառն ու շփոթ ներկայացնելը երևում է առարկաները պարզապէս նկատելու միջոցին, և գորանով զարդացնել երեխայի մէջ աւելի մեծ ուղղութիւն և ճշտութիւն բոլոր տուած ձևերը համեմատելու և չափելու մէջ, իսկ օրինակելու միջնորդութեամբ սակաւ առ տակաւ պատրաստել նրանց վայելչագրութեան և նկարչութեան համար: Երկրաչափութիւնը, նկարչութիւնը և վայելչագրութիւնը ձևելի արդիւնքներ են: Զեւկան առարկաները ներկայացնելուց նևիում է չափելու արուեստը: Նա առաջուց կարգում է նկատողութեան ացբենարանը, այսինքն՝ նա առաջուց կարգում սպհմանում է չափելու կանոնները հասարակացնելու (պարզելու): և որոշելու արուեստը միջնորդութեամբ իւխստ որոշման բոլոր անսատուգութիւնների, որոնք երեւում են գաղափարական պատկերի մէջ (յանդիմանութեան մէջ):

Դիտողական ուսման տցբենարանը կայանում է կանոնաւոր երկրաչափական բառակուսին բաժանելու մէջ հաւասարաչափ և միակերպ մասերի, որոնցից բազագրում են զանազան երկրաչափական ձևերը: Նա պահանջում է ճիշտ զիտութիւն այդ ձևերի և ուղիղ գծի յատկութիւնների իւր գուգահեռական և ուղղահացեաց դրութեամբ: Քառակուսի մասերը, որ առաջանում են նրան բաժանելուց ուղղահացեաց և զուգահեռական գծերով, դառնում են միջոցներ՝ բոլոր անկիւնները, նոյնպէս շրջանը և բոլոր կորագծերը (աղեղները) ուղիղ չափելու և որոշելու համար: Այդ բոլորն ի միասին Պեստալոցցին անուանում է դիտողական ուսման ացբենարան:

Այդ ացբենարանը երեխային սովորեցնելու համար, նրան ճանօթացնում են ուղիղ գծի յատկութիւնների հետ

Նրա զանագան դրութիւններում: Ապա որոշում են ուղիղ գծերի մէջ հորիզոնականներ, ուղղահայեցներ և թեքուածներ, զուգահեռականների մէջ հորիզոնական-զուգահեռականներ, ուղղահայեց-զուգահեռականներ և թեքուած զուգահեռականներ: Ապա անուանում են զանագան անկիւններ, որոնք առաջանում են այդ գծերի փոխադարձ միջահատութիւնից և այլն: Խսկ այդախով երեխան ծանօթանում է երկրաշափական արդուածների հիմնական ձևի հետ: Հաւասարակողմն բառակուուու հետ, որ յառաջանում է երկու անկիւնների միաւորութիւնից, ապա շրջանի հետ և այլն, և ուսանում է անուանել նրանց յականի անուանէ և գծագրել նրա համար՝ որ բնութեան մէջ բոլոր պատահող իրը կարողանանք ամփոփել բառի տակ, որ արտայալտում է հասկացողութեան ընդհանրութիւնը:

Նկարչութիւնը մի արուեստ է, առարկան տեսնելուց յետոց, յանդիման կացուցանելու իրան և հաւատարմափէս գծագրել նրա ուրուականի գծերը և ներսում պարունակուող նշանները: Վայելչագրութեան մատակարարութիւնը տուաւել, քան նկարչութեանը, կարող է լինել սկսուած առանց նախընթաց վարժութեան՝ յայտնի մեծութեան գծերը գրելու մէջ, և սակայն ոչ միայն նրա համար, որ նա գծագրութեան մի առանձին տեսակն է, որ չէ ընդունում ոչ մի կամաւոր խոտորութիւն որոշած ձևից, այլ զիշաւորապէս նրա համար՝ որ ուսանելով վայելչագրութիւնն աւելի փաղ, քան նկարչութիւնը, աշակերտը հարկաւ աղաւաղում է իւր ձեռքը վերջինիս համար: Վայելչագրութիւնն առաւել ընտելացնում է ձեռքը յայտնի ձևերի և առնում է նրան կարծը յառաջ, քան ըստ բաւականին կը զարգանար ձեռքի դիւրակորութիւնը և նրա ընդունակութիւնը՝ արտադրելու այն բոլոր ձևերը, որոնք էապէս կարեւոր են նկարչութեան համար:

Այդպիսի տարրական ուսումն ձևերի արուեստների, նեղ և անձուկ կապ ունէ գիտութեան ուսուցման հետ:

Տոլոր վարժութիւններն արուեստների մէջ ունեն իրանց նպատակը՝ մտաւորական կարողութիւնների զրգուում և զարգացում, իսկ գիտութիւններ ուսուցանելու ժամանակ գլւասար գործը կայանում է նրանում, որ առարկան կանոնաւոր և ամուր կերպով սեփականուէր մեր մտքին և որ ամենայն փորձնական գիտութիւն հաւատարմապէս պահպանուէր մեր ցիշողութեան մէջ: Եթէ մինչեւ անգամ ընդունենք արուեստների անընդմիջական ազգեցութիւնը գիտութեան վրա, ապա արդէն կարեւոր է ինքն ըստ ինքեան նորանց միջնորդական ազգեցութիւնը, նրա համար՝ որ զգացական հացեցողութեան ընդունակութիւնն ամրացնում և զարգացնում է ցիշողութիւնն ու բանականութիւնը: Մատակարարութեան համար իր ամեն ճիւղերում կարելի է ընտրել այդպիսի խիստ-մետողիքական ճանապարհ, որից խիստ շատ է շահվում ուսումն ու գիտութիւնը իւր հիմնաւորութեան և գործնական պիտանաւորութեան մէջ:

Մեր գիտութեան երրորդ տարրական միջոցը, թիւը հիմք է թուաբանութեան, որ բոլոր կայանում է շատ միութիւնների պարզ միաւորութեան և բաժանման մէջ: «Մարդերի գրքի» առաջին աղիւսակները պարունակում են իրանց մէջ առարկաների կարգը, որոնք գիտողաբար հաղորդում են երեխացին հասկացողութիւններ թուերի մասին մէկից մինչեւ տասը: Երեխան մկում է հասկացողութիւններ թուերի մասին ունենալ ոչ միայն առանձին միութիւնների վրա, որոնցից կազմում են թուերը, այլ և թուերի զանազան ծագումը և յարաբերութիւնները մինչեանց մէջ զարգանում են այնպիսի պարզութեամբ, որ երեխաները իրանք իրանց կարողանում են կազմել նրանց վրա հասկացողութիւն

գործնականապէս: Բացի գրանից քառակուսին, որպէս  
ամենահսաբարակը և ամենալատարեալը երկրաշափական բո-  
լոր ձևերից, բաժանվում է մասերի: Այդպիսով թուաբանու-  
թեան գիտութիւնը դառնում է հետեանք ամենապարզ դի-  
տողական հայեցողութեան: Դորա հետ համեմատելու ժամա-  
նակինչ է յանդիման կացուցանում մատակարարութիւնն այն  
տեսափով, ինչպէս նա կատարփում է իրականութեան մէջ:

Ներկայ սերունդը, ասում է Պիտալօցցին, զոհ է՝  
բերում ամենայն ուսուցման էութիւնը անկապ, առանձին  
ուսումների քառսին, վառելով (պարա) աշակերտները  
ճշարտութիւնների զանազան փշրանքներով, նա սպա-  
նում է նրանց մէջ ճշարտութեան նոյն իսկ հոդին և  
ոչնչացնում է նրանց մէջ ինքնակացութան գորութիւնը,  
որ հիմնուած է նրա վրա: Ինձ յացտնի էր, որ այդ  
մատակարարութիւնը իւր միջոցները չէ հիմնում տարրա-  
կան սկզբունքների և ձևերի վրա, որ չընդունելով դիտո-  
ղականութիւնը իրեւ բացարձակ հիմք ամենայն դի-  
տութեան, նա ինքը զիկում է իրան կարողութիւնից՝ հաս-  
նելու իւր առանձնացած միջոցներով մատակարարութեան  
նպատակին, այսինքն՝ պարզ հասկացողութիւններին, և  
չէ կարող բարձրացնել այն աւելի սահմանափակուած հե-  
տեանքների անպայման կարեորութեան աստիճանի վրա,  
որոնց նա իւր համար նպատակ է դնում»:

Այն դիտութիւնների կարգում, որոնք զործնական  
տեղեկութիւն չեն կազմում, գտնվում է տեղեկութիւնը,  
զործնական յարմարութիւնը (որութեանու), որ դարձեալ  
էապէս կարեոր են լիակատար կրթութեան համար:

Կարելի է ասել՝ որ դա էր ամենամնասակար պար-  
գևը, որ արել է թշնամական հանձարը մեր դարին, այ-  
սինքն է՝ տեսական դիտութիւնն առանց զործնական դի-  
տութեան, առանց զօրութիւնները լարելու և դժուարու-

թիւնները յաղթահարելու սովորութեան, որոնք առաջնոր-  
դում տանում են գէպի մեր իրական գոյութեան և կեն-  
դանութեան ներգին ներդաշնակութեան:

Այդպէս Պիտալօցցու մետողի զլխաւոր սկզբունքն  
էր այն, թէ բոլոր մատակարարութեան հիմքը և զլխաւոր  
կէտք (ԱԽՈՃԹԱ ՏՕՎԿԱ) պէտք է լինի դիտողութիւնը, և  
բոլոր հասկացողութիւններն ու դադափարական պատկեր-  
ները պէտք է շինուեն դիտողական հայեցողութիւններից:  
Դժուար է գնահատել Պիտալօցցու մետողի բոլոր կարեռ-  
ութիւնը նրա արդիւնաւոր ազգեցութեան վերաբերու-  
թեամբ բոլոր առարկանների մատակարարութեան վրա:  
Ուսումնական առարկաններից խրաբանչիւրի վերաբերու-  
թեամբ նա պահանջում է, որ մատակարարողը աստիճան առ-  
աստիճան անցնէր խիստ մօտաւորից դէպի խիստ հեռա-  
ւորը, յատնից դէպի անյացուը և որ մատակարարութիւնը,  
կարելոյն չափ, հիմնուէր առարկանների միատիւ մատիքական  
հայեցողութեան վրա: Խոկ այն, ինչ որ բնութեան մէջ  
կարելի է նկատուել անընդմիջապէս, պէտք է դիւրամերձ և  
խմանալի կացուցանել երեակացութեանը համեմատութեան  
օգնութեամբ յառաջադրոյն նկատածի հետ, քարտէզների,  
նկարների, մանրամասն (աշխարհագրական, պատմական և  
բնագիտական) նկարագրութեան միջնորդութեամբ: Նա  
պէտք է տեսաննելի կացուցանուէ փորձերի, դիտողութիւն-  
ների և նախկին դիտողութիւնները առաջ բերելու օգ-  
նութեամբ, պէտք է պարզէ և բացատրէ մտքի ու սրաի  
համար ներգին զգացմունքները զրգուելու միջնորդութեամբ,  
օրինակների, զրոցների նմանեցնելու և լիշտակութիւն-  
ների (բարոյականութեան և կրօնի ուսման) միջոցով:  
Պիտալօցցու մետողի հոգին պահանջում է, որ սանիկի վրա  
նայէին ոչ ինչպէս կենազուրկ նիւթի վրա, որից կարելի  
է շինել ինչ կամենում ենք, այլ ինչպէս մի կենազանի կապ-

մուածքի վրա, որ զարգանում է ներքին կարողութեան հաղորդակցութեան միջոցին: Դրա համար ուսուցանելիս մի բան չէ կարելի մտցնել պիսի մէջ մեքենայօրէն, թողնելով երեխայի ներքին կարողութիւնն անմատչելի, բայց պէտք է զարթեցնել նրա սեփական հոգեկան կարողութիւնը և զարդացնել նրա մէջ ինքնագործունշութիւնը: Պեստալօցցին դաստիարակութեան զիսաւոր խնդիրը տեսնում էր ոչ թէ օգտավէտ գործնական նպատակների մէջ, այլ ինտէնզիւական հոգեկան կարողութեան վարժութ եան մէջ, անհատականութեան լիակատար զարգացման մէջ, բոլոր հոգեկան ընդունակութիւնների ամենակողմանի ներդաշնակական զարգացման մէջ:

«Ինչպէս Գէրտրուդան ուսուցանում է իւր երեխաներին» զրքից յետոյ հրատարակուեց 1803 թուականին «Մայրերի գերք կամ ձեռնարկութիւն մայրերի համար, թէ ինչպէս պէտք է ուսուցանեն իրանց երեխաները՝ նկատելու և խօսելու» (Buch der Mütter, ihre kinder bemerkten und reden zu lehren): Այդ գրքի նպատակի համար ինքն Պեստալօցցին հետեւալն է ասում. «Ի՞նչն է ամենից կարևորը մայրերի համար,—այն ձեռնարկութիւնը՝ որ տար նրանց կարողութիւն, երեխային խօսալ ուսուցանելիս, առաջ գնալու այն կէտից, որի վրա գրած են նրանց կարիքը և հանգամանքները: Մինչև այս ժամանակները չկար ձեռնարկութիւն, որ ցոյց տար մայրերին այդ ելման կէտի բոլոր կարեռութիւնը երեխաներին ուսուցանելիս: Մայրեր, այս գրքի նպատակն է որ ես ձեզ առաջարկում եմ, տալ ձեզ կարողութիւն՝ բաւականութիւն տալ բանաւոր դաստիարակութեան առաջին կարիքին, որի համար դուք չունեիք ոչ մի միջոց, համաձայն մարդկային բնութեան»:

«Մայրերի համար» գիրքը պէտք է լինի ձեռնարկ մայրերի համար՝ ուսուցանելու իրանց երեխաներին նկատո-

ղութիւն և լեզու: Այդ դիտողական ուսուցման առաջին առարկան է Պեստալօցը կարծիքով, մարդկային մարմինը, որովհետեւ երեխայի ուշագրութիւնն ամենից առաջ դառնում է ոչ թէ արտաքին առարկաների վրա, այլ երեխաների սեփական էութեան վրա, նրա սեփական «ես»-ի վրա: «Ի վազուց հետէ ասուած է, որ մարդկային ամենայն զիստութիւն սկսվում է ինքնաճանաչութիւնից —և ես հետեւում եմ այդ կանոնին»: Լիզուի ուսումը մինչև անգամ խիստ չքաւոր մայրերի մէջ միանում է երեխայի ֆիզիքական կրթութեան գործի հետ լուացման ժամանակ մայրը յականէ անուանէ տալիս է անունը երեխայի մարմնի այն մասի, որ լուանում է: «տուր ինձ քո ձեռքքը, տուր ինձ քո ոտը», ճիշդ այդպէս խոկ, երբ նա կերակրում է երեխային, նա յականէ անուանէ տալիս է կերակրի, ծաղկամանի, տարգալի և այլ անուները»:

Մարդկային մարմինը, Պեստալօցը կարծիքով, ուսումնասիրվում է տասն վարժութիւններով, որոնց մէջ նա (մարմինը) նկատվում է տասը կէտերից: Առաջին վարժութեան մէջ ցուցանվում է անուանվում են մարմնի արտաքին մասերը, երկրորդում ցուցանվում է այդ մասերի իրաքանչիւրի դրութիւնը. երրորդ վարժութեան մէջ ուշք է դարձնվում նրանց կապի վրա միմեանց մէջ, չորրորդում ցուցանվում են մարմնի գուգական և անզոյի մասերը. հինգերրորդի մէջ նկատվում է անուանվում են իրաքանչիւր մասի ամենազլիւաւոր յատկութիւնները. վեցերրորդ վարժութեան մէջ երեխան ուսանում է որոնել և յականէ անուանէ տալ անունները մարմնի այն մասերի, որոնք ունեն իրանց մէջ որ և է ընդհանուր իր իրանց, երախային արգէն յայտնի յատկութիւնների մէջ, եօթերրորդում մայրն ընտելացնում է երեխային նկատելու և արտայայտելու բառերով, որպիսի գործեր կատարում է նրա նկատած մար-

մնական մասերից իւրաքանչիւրը, երբ և որպիսի դիպուած-ներում սովորաբար կատարփում են այդ գործողութիւնները, ութերորդում երեխացի ու աքը գարձնփում է նրա վրա, ինչ որ կարեղ է նրա մարմնի պահպանութեան համար, իններորդում, վերանորոգերով երեխացի մտքի մէջ մարմնի զանազան մասերի յատկութիւնները, մայրը ցոյց է տալիս այդ յատկութիւնների զանազանակերպ օգուտը և ուսուցանում է նրան դատողաբար (ТОЛКОВО) խօսել նրանց մասին. տասներորդում ստիպում են երեխացին կապակցել բոյոր անցած ինն գարծութիւններում և նկարագրել իւրաքանչիւր մասը այնքան, որքան նա ճանօթացած է նրա հետ բոլոր նախընթաց գարժութիւններից,

Բայց դեռ առաջ, քան կը վերջանան այլ վարձութիւնները մարդկացին մարմնի ուսումնասիրութեան մէջ, երեխան ծանօթացած պէտք է լինի իրան շրջապատող միւս առարկաների հետ, «Ամենակին հարկաւորութիւն լից, որ մացը, ուսուցանելով երեխացին նկատելու և անուանելու մարդկացին մարմնի մասերը, լիակատար կերպով ուսումնասիրէր այդ առարկան, ընդհակառակն՝ օգուտ քաղելով այդ ձեռնարկութիւնից, նա պէտք է զիտէ, և նկատէ երեխացի հետ բոլոր շրջապատող առարկաները. վերջացնելով գասը մարդկացին մարմնի վրա, նա իւրաքանչիւր անդամ անցնում է դէպի միւս աղդակից առարկաները: Թա՞ղ մացը, հետեւրով զբարիս կարգին, իւրաքանչիւր անդամ ընտրէ զգայական տպաւորութիւնների մասսացից, որոնցով շրջապատուած է երեխան, սակաւները, բայց էապէս կարեւորները նրա վարդացման համար: Խօսքի և նկատողութիւնների մէջ վարժելու ժամանակ նա պէտք է կանգ առնէ իւրաքանչիւր առարկացին վրա, մինչեւ այն ժամանակները, երբ երեխան լիովին իրան կըսեփականէ առարկան և նրա մասերը տեսութեան բոլոր ցուցած կէտերից և կընտելանայ խօ.

սել նրա մասին ոչ միայն ճշտութեամբ և պարզութեամբ, այլ և անսահման դիւրութեամբ»: «Ընտելացրու երեխացին, հետևելով այս վրբի կարգին, իւրաքանչիւր առարկայի մէջ, որ կը ցոյց տաս նրան տան մէջ, դաշտում և այզում, անուանելու նրա անունը, յատկութիւնը, ձեր, զործողութիւնը և այլն. դարձրու նրա ուշքը առարկաների մօտաւորութեան և հեռաւորութեան վրա, թուի և քանակութեան վրա, զործադրելով այդ յարաբերութիւնները որոշելու համար դիտողական ուսում թուաբնութեան և երկրաչափութեան: Եղից այդ միջոցները կրտսան քեզ կարողութիւն՝ ուսուցանել երեխացին խօսել ամենամեծ պարզութեամբ ամեն տեսակ զգացական առարկայի մասին»:

«Մայրերի գիրքը» մտափրութեան մէջ է առնւամ միացն խօսքը և թողնում է մի կողմ ձեր և թիւր: Եբրե կատարման կէտ (תוշա ուորավլեհի) նա վեր է առնուամ նոյն խակ երեխացին, բաց նկատում է նրա մարմնի միայն ձեր և կորչում է մարդակազմական մանրամասնութիւնների մէջ, փոխանակ նրա, որ պարտ ու պատշաճ ուշը դարձնէ նրա վրա, ինչ որ ամենից մօտաւոր կերպով է հայում (վերաբերում) դէպի երեխան. նրան շրջապատող շարուածքի վրա, նա սկսում է աներնդմիջական նկատողութիւնից և առաջնորդում տանում է այստեղից աստիճանաբար դէպի հեռուն, բաց նա մուտանում է, որ զործունէութիւնը նոյն պէս կազմում է երեխացի կարիքը և որ՝ ամենայն կեանք մկանում է զործողութիւնից և ոչ թէ զիտակցութիւնից (Հովհանոս):

Բայց որպէս և զինէր, իւր «Սացբերի գրքով» Պետականօցիկն կատարեց մի մեծ քաջագործութիւն, տալով մայրերին առաջին ձեռնարկ դաստիարակութեան:

Պեստալօցյու դործունէութիւնը Բուրգդօրֆում զրգը-  
ռեց ընդհանուր ուշադրութիւնը ոչ միայն Հվիյցարիայում, այ

Կ. Բոլոր Գերմանիացում: Օտարականները ամեն կողմից հաւաքվում էին այստեղ, որ ուսումնասիրեն նրա մետողը գործնականապէս և նրանով կազմեն իրանց համար նրա վրա աւելի պարզ հասկացողութիւն, քան այն հասկացողութիւնը, որ կարելի է դուրս բերել Պեստալոցցու հեղինակութիւններից, որոնց մեկնողութեան եղանակի զիսաւոր յատկութիւնն էր խիստ մթութիւնը և խրթնութիւնը:

Բուրգդօրֆում միացաւ Պեստալոցցու հետ Նիդերէրը, որ հրաժարուեց ծխական քահանայի կոչումից, և ջանք գործ դրեց բացատրել տեսականորին և սխտեմատիքաբարձր այն, ինչ որ Պեստալոցցին ունէր բնագրական և հատուածական կերպով: Մի և նոյն ժամանակ նա իւր վրա առաւ մանաւանդ կրօնի ուսուցչութիւնը: Յաւելով պէտք է ասել, որ Պեստալոցցին կարողացաւ մնալ Բուրգդօրֆում միայն մինչև 1804 թուականը, երբ պարտաւորուած էր առանց հակառակութեան զիշանել Բուրգդօրֆ բերգը կառավարութեան: Նա փոխադրուեց մկրում Միւնիսինի Բուխզէ մենաստանը և 1805 թուին Խիերտէն, Վաադ կանտօնում: Եւ այստեղ աւելի ևս բազմանում էր, ինչպէս որդեգիր աշակերտների թիւը, այնպէս և ուսումնարանի փառքը, որ հրապուրում էր օտարական ացելուներին Երոպացի բոլոր կողմերից: Այն ժամանակ Փիխտէն, իւր ճառի մէջ դիմերով գերածանական ժողովրդին, յայտնեց թէ Գերմանիայի փրկութիւնը և բարութիւնը կախուած են Երիտասարդութեան բարուոք ազգացին կրթութիւնից և առաջարկեց «Հիմնել այնպիսի դաստիարակութիւն նոյն մատակարարողական մետողով», որ գտել էր Պեստալոցցին և որ երեացել էր խիստ արդիւնաւէտ՝ գործնականապէս: Նա ընդունում է, առհասարակ, նրա հիմնական կարծիքների ճշտութիւնը, չենքելով միայն մի քանի մասնաւոր փոփութիւնների կարեորութիւնը:

1809 թուին Պեստալոցցու ուսումնարանական շինութեան մէջ գտնվում էին մինչև 15 մատակարարողներ 165 որդեգիր-աշակերտների համար, որ եկել էին Գերմանիացից, Ֆրանսիացից, Խոալիացից, Ավեցցարիացից, Թուստատանից և Հիւսիսացին-Ամերիկացից և բացի դրանից 32 հասակաւորներ, որ ուսումնասիրում էին Պեստալոցցու մետողը: 1807 թուին Պեստալոցցին ծնողներին և բոլոր հասարակութեան հաշիւ առաջարկեց իւր ուսումնարանական շինութեան մասին: «Եյն դժուարութիւնները, որոնց հետ պէտք է մաքառէր իմ առաջարկութիւնը», ասում էնա, «խիստ մեծ էին. ընդհանուր կարծիքը բոլորովին հակառակ էր ինձ, ոչ ոք չէր կարծում, թէ այդ գործը համապատասխան էր իմ ընկերների և աշխատակիցների ոյժերին: Հազարաւոր մարդիկ իմ նախասկրբնական փորձերի փառաքը կրկներևութիւն տեղ էին ընդունում և կարծում էին» որ նա հիմնուած է լոկ խաբեքացութեան վրա, որից հասունացած մարդիկ չեն յապաղի առնել դիմակը: Գրեթէ ամենքը, ով իրան յարմար և բաւական էր համարում կատարելու դատաւորի գերը այդ նոր մետողը գատապարտելիս, ամենեւին վճռած գործ էր համարում, թէ նա ոչինչ բանի պէտք չէ: Վիճաբանում էին միայն նրա մասին, թէ ինչ բանուածն են կայանում նրա անպիտանութեան պատճանները: Ոմանք կարծում էին, թէ նա մի հասարակ, անարուեստ կազմութիւն է. միւսները կարծում էին, որ նա վարժում է մի միայն ցիշողութիւնը և զոհ է բերում նրա համար բանականութիւնը. Երրորդները խիստ լուրջ կերպով ասում էին, թէ մենք մեր ընդունելութիւններով չափազանց զարգացնում ենք բանականութիւնը և առանց ուշադրութեան ենք թողնում ցիշողութիւնը. չորրորդները գտնում էին, թէ մենք ամենեւին զանց արեցինք կրօնը. Վերջապէս, հինգերորդները՝ թէ

մենք տարածում ենք յեղափոխական հայեցուածները։ Եցն վնասը, որ կարող էին տալ ուսումնարանական շինութեան այդ ձայնուութիւնները, աստուածային ջնորհով յաջողուեց հեռացնել։ Աւսումնարանը ընդգիմացաւ՝ ութշանը և դժուարատար տարիների փորձութեան։ Մենք կարող ենք ասել ամենի լողութեան համար, անդորր խորհմանքով. մեր ուսումնարանի որդեգիր-աշակերտները բաղդաւոր և բաւական են։ Նրանց անմեղութիւնը պահպանուած է, աստուածայիշտութիւնը նրանց մէջ զարդարած է, միտքը լուսաւորուած, գիտութիւնները բազմապատկուած, բնաւորութիւնը հասուցած բարոյական զարդացնան յայտնի աստիճանի։

Պեստալօցցեան ճեմարանը ձգտում էր բարձր նպատակի, բայց ուսումնաստացութիւնը նրա մէջ պէտք է ընդհատուէր յանախ նրանով, որ երեխանները պարտաւորուած էին ցոյց տալու իրանց արուեստը զանազան կայրներին և նախարարներին, որոնց Պեստալօցցին աշխատում էր թեքել դէպի իւր կողմը։ Դորա վրա աւելացաւ ուսումնարանի մատակարարողների թերակատար լուսաւորութիւնը, որոնք թէև տալիս լին մատակարարութեանը սիստեմատիքականութիւն և կարդ, բայց չին կարողանում առաջ տանել իրանց անձնական կրթութիւնը, նրա համար որ ուսումնարանում չկային առանձին բնակարաններ նրանց համար, բայց կային միայն դասատան և ննջարանի սենեակները և նրանք պարաւոր էին երեխանների հետ միասին ապրել, ապատ ժամերում աշխատել այգում, փառականութեան մէջ առաջին կամէր կրակը լուսաւորութիւնը, որոնք բոլորովին անհանձան էին նրանց առաջարկած դիտաւորութեան հետ և նրանց բոլորովին անընդունակ էին համարում կատարելու իրանց պարտականութիւնը։

1811 թուականից հասաւ ուսումնարանի համար տխուր ժամանակ՝ երկարաւատիկութիւնների պատճառով մատակարարողների մէջ, որոնցից իւրաքանչիւրը կամէր գլխաւոր դեր խա, զալ և ամենամեծ ազդեցութիւն ունենալ Պեստալօցցու վրա-

Պատերազմը, որի մէջ կուսակցութիւնները խմբվում էին, մանաւանդ նիդերերի և Գնիդտի շուրջը, միշտ առաւել և առաւել խանգարեց գործերը Իֆէրտէնուում, մանաւանդ այն ժամանակից, երբ մեռաւ Պեստալօցցու կինը (1815 թ.): 1816 թուին տասներկու մատակարարները թողել էին ուսումնարանը, և Պեստալօցցին գտնվում էր կրիտիկական դրութեան մէջ։ Բայց 1818 թուին, երբ ստորագրութեամբ հաւաքուած էր մի նշանաւոր գումար<sup>\*)</sup>, Պեստալօցցու հեղինակութիւնների հրատարակութեան համար, նրա մէջ վերստին կենդանացան նախկին ցոյսերը։ Նոյն թուին նա սահմանեց Իֆէրտէնի մօտ, կինդիում, առանձին ուսումնարան, որի մէջ չբաւոր երեխանները պատրաստվում էին չբաւորների համար ուսուցիչներ և դաստիարակներ լինելու։ Բայց շուտով այդ շինութիւնը զանց արեց իւր սկզբնական նըրպատակը. փորձը չափանիկութիւնը որպիշետև երեխանների վրա սկսում էին սպատուաստել «այնպիսի գիտութիւններ, սովորութիւններ, պահանջներ, ցնորդներ և ցանկութիւններ, որոնք բոլորովին անհանձան էին նրանց առաջարկած դիտաւորութեան հետ և նրանց բոլորովին անընդունակ էին համարում կատարելու իրանց պարտականութիւնը»։

Պեստալօցցին ցոյս ունէր փրկել իւր ուսումնարանը, փոխադրելով Իֆէրտէնից Նէցիօֆ, բայց երբ նրա որդեգիր աշակերտները հրաժարուեցան հետևելու նրան, ապա Պեստալօցցին կորցրեց ամենայն ակնկալութիւն՝ իրազործելու իւր մաքերը։ «Միտքը՝ թէ կարելի է փոխադրել ճեմարանը Իֆէրտէնից Նէցիօֆ, ուր ես ցոյս չունէի յառաջադիմութեան համար, վերջապէս բոլորովին անյախացաւ։ Հոգում մէջ։ Գործն այն տեղը հասաւ, որ ես պարտաւոր էի հրաժարուել իմ ցոյսերից և նպատակներից, որպէս ան-

<sup>\*)</sup> Այդ թւում 5,000 ռ. արձ. Ալեքսանդր Ի կայսրից

իրագործելի ցոյներ և նպատակներ»: 1825 թուին Պեստալոցցին փակեց իւր ուսումնարանը և լինելով արդէն ուժունամեաց ձերունի, հեռացաւ Նէյնօվի իւր թուան մօտ:

Զընայելով ճակատագրի այդ բոլոր հարուածներին և իւր ձերութեանը, Պեստալոցցին գտաւ իւր մէջ զեռ բաւական ոյժ, որ իւր վերջին «Կարասի երդ» (Schwanengesang) վերնագրով հեղինակութեան մէջ մի անդամ ևս բացարէ իւր ուսան էութիւնը և չկտակէ աշխարհին իւր գտած այն ճշմարտութիւնները՝ թէ ուսումնարանը պէտք է շինէ սանիկից մարդ, թէ գուտ-մարդկային լուսաւորութիւնն աւելի բարձր է մասնագիտական գործնականից, թէ գործնական գիտութիւնն աւելի կարեոր է միայնակ տեսական գիտութիւնից և թէ ամենը, մինչեւ անդամ բարձրագոյն մտաւորական լուսաւորութիւնը, պէտք է հիմնուած լինի նոյն խակ տարրական սկզբունքների վրա:

Պեստալոցցու այդ վերջին հեղինակութեան վրա, ճիշտ այնպէս, որպէս և նրա ինքնակենսագրութեան վրա, (Le bensschicksale) շատերը նայում էին, որպէս մի հոգով հիւանդ և կեանքից փատակած ալեւորի մելամալճոտ գանգատների վրա: Կարլ Ռաումէրը, ընդհակառակին, իրաւացի է համարում նրա դատողութիւնների ճշտութիւնը և նպատակայարմար հմտութիւնը այդ վերջին ժամանակ:

Պեստալոցին մեռաւ 1817 թուի փետրուարի 17-ին: Յօդուածիս վերջարանում հայեացք ձգենք. Պեստալոցցու յարաբերութեան վրա դէպի նախընթաց մանկավարժական գործակատարները, մանաւանդ դէպի Թուասոն և դէպի մարդասէրները\*):

Պեստալոցցու հայեցուածների մէջ նկատելի էր Թու-

սովի ապկեցութիւնը, բայց նրանց մաքերի խիստ նմանութեան հետ միասին, թէ մէկի և թէ միւսի մէջ կարելի է նկատել արմատական տարրերութիւն:

«Թուասոն և Պեստալոցցին», ասում է մանկավարժ Յոլլէրը, «Երկուան ՚ի միասին մարդու բնական դրութիւնը համարում են ամենաներջանիկը, իսկ հասարակական (կուրտուրական) զրութիւնը խոստովանում են աղբէւր ամենայն չարիքների: Բայց յետոյ նրանք բաժանվում են: Թուասոն տեսնելով հասարակաց յարաբերութիւնների մէջ մարդկային գոյութեան միայն ճնշումն և ապականութիւն, պահանջում է յետադարձութիւն դէպի բնական դրութիւնը: Պեստալոցցին, ընդհակառակին, ընդունում է կարևորութիւնը յառաջադիմութեան և ոչ յետադիմութեան: Փորձը, որ մարդը ստանում է հասարակաց դրութեան մէջ, պէտք է համոզէ նրան իւր բնութեան ստութեան և անկատարութեան մէջ և բերէ նրան դէպի բարոյական օրէնքի գիտութիւնը, նա պէտք է զարթեցնէ նրա մէջ՝ անասնական բնութեան և հասարակաց յարաբերութիւնների բոլոր վնասակար աղբեցութիւնը իւր մէջ ոչնչացնելու պարտականութիւնը: Թուասոյի մտքերը հասարակաց յարաբերութիւնների թիւրութեան մասին, տանում են դէպի արտաքին քաղաքական յեղափոխութիւն, իսկ Պեստալոցին պահանջում է ներքին, բարոյական փոփոխութիւն նրա համար, որ բոլոր հասարակական յարաբերութիւնների մէջ թափանցում էր բարոյական ոգին, առանց որի նրանք մնում են միայն եսականո թեան արդիւնքները: Այդպէս Պեստալոցցու ուղղութիւնը ոչ միայն բացասական էր, ինչպէս Թուասոյինը, այլ միւնոյն ժամանակ և դրական: Պեստալոցին առնում է բնութիւնը (la natur) նրա կեանքով, նրա դրական բովանդակութեամբ և նրա վրա է սահմանում իւր մանկավարժութիւնը:

\*) Պեստալոցցու նշանակութիւնը ժամանակակից մանկարժութեան համար, մենք, եթէ արդեւք ըդառնան ողմնակի հանգամանքներ, լուս կընծայենք հայերէն:

ամառավագի այդ բացասական բնաւորութեան հետևանքըն է, ասում է Պալմէրը, որ նրան՝ մանկավարժական մետողի և բոլոր մանկավարժական սկզբունքների ընտրութեան հետ միասին, առաջնորդում է միմիացն և յատկապէս ընդդիմադրութեան հոգին ընդդէմ դոցութիւն ունեցող կարգի:

Նրա ժամանակ արհամարհում էին երեխաների ֆիզիքական դաստիարակութիւնը և նրանց գլուխները բեռնաւորում էին զանազան ուսումնական աննշան մասերով։ Դրա համար և նա մանկավարժութեան զիստուր դորջը համարում է ֆիզիքական և մարմնական (զակալչ) կրթութիւնը, իսկ աշակերտի զիտութիւնները պէտք է առհամանափակուէին միայն նրանով, ինչ որ նա ինքը տեսաւ և փորձեց։ Բազէտովք ցոց է տալիս մի այլ տեսակ զգուանք դէպի սկզբունքները աշակերտը պարտաւոր է ուսանել իսկ և իսկ այն զիտութիւններն ու արտեսանները, որոնք օգտական գործնական կեանքում և միայն թէ իւրաքանչիւր առարկայի ուսումը պէտք է կատարուի հնարաւորութեան չափ խիստ զիւրին և խիստ ախորժ կերպով։ Պեստալոցին փոխանակ այցալէս զանազան մասերի բաժանելու, բոլորը բլիսեցնում է մի սկզբունքից։ Ինչպէս առանձին ճիւղերը այդպէս և նոյն խակ մատակարարութեան մետողը Պեստալոցին ստորագասում է մարդկացին բնութեան միւնքին օրէնքի տակ։ Եւր մանկավարժական հայեցուածների միութեամբ և իւր զտած յուսաւորութեան միջոցների միութեամբ, Պեստալոցին խիստ բարձր է համարվում իւր նախորդ ներից»։

«Պեստալոցու մետողը, ասում է Յոլմանը, ջանք է անում ամրացնել և զարգացնել լաւ առհաւատչաները, զոյացող զօրութեան սաղմէրը — ընդդիմադրութելով ժողորութեան՝ զիտութեան դոցացող առհաւատչաների զարգաց-

մամբ և ընդդիմադրութելով զգայականութեան (յանկասիրութեան)՝ հոգու ամրութեամբ։ Մարդաւէրները նոյնպէս խօսում էին մարդու բոլոր առհաւատչաների ներդաշնակական զարգացման վրա, բայց նրանց յատուկ ձգտումները ուղղած էին դէպի այն, որ մատակարարեն սանիկին՝ կեանքին պիտանացու նիւթական զիտութիւններ։ Պեստալոցին ընդհակառակն, աչքի առաջ ուներ սանիկի ներքին կատարելագործութիւնը՝ նրա ընդունակութիւնների կանոնաւոր զարգացման միջնորդութեամբ։ Զետիկան կրթութիւնը նրա համար զիտաւոր խնդիրն էր, նիւթական զիտութիւնները միմիացները երկրորդ աստիճան էին։ Մտաւորական մարդութիւնը պէտք է աստիճանաբար ամրացնէ միտքը աշնչափ, որ նա ունենաց կարողութիւն տեղեկանալու իւրաքանչիւր զիտութեան և խրաքանչիւր արուեստի հետ։ Ացդ պատճառով ուսումնարանի նշանաբանն էր՝ կարողութեան զարգացումը։ «Դրանում, ասում է Պալմէրը, Պեստալոցին աւելի մօտենում էր Ռուսսովն, քան թէ մարդաւէրներին։ Բայց այն միջոցին, երբ Ռուսսոն կամենում է զարգացնել ֆիզիքական կարողութիւնը, միայն սպահանելով նրան, վերաբերուելով զէպի նրան կրաւորաբար և մընալով, նրա զարգացման ժամանակ, կողմնակի ականատես, Պեստալոցին ուսուցանում է, թէ դաստիարակութիւնը մի արուեստ է, որ կայանում է միջոցների աստիճանաբար և նպատակայարմար յարմարեցնելու մէջ, որոնք թէեւ փոխ են առնուած բնութիւնից, բայց պարտաւոր են լինել յառաջադրույն փորձուած, որ իրական լինեն»։

Մէրը զէպի խեղճերը և փսեմ յարգանքը զէպի ընտանեկան կեանքը՝ Պեստալոցու աւելի հեռաւոր զարգրկեաններն էին, որոնք պեստալոցին մանկավարժութեան ոլոշող յատկութիւնն են կազմում։ «Մարդաւէրները, ասում է Պալմէրը, նոյնպէս մեկնեցին ժողովրդի բարու-

թիւնը և անկեղծօրէն ձգտումն դէպի նա, բաց իրանց կրթողական շինուածներում հասան միայն այն հետեւանք-ներին, որ նրանց կարող էին յանձնել իրանց երեխանները միայն հարուստները, որովհետև գիշերօթիկների համար վճարը մեծաքանակ էր. Բազէտովք դէպի ընտանեկան կեանքը քիչ յարգանք ունէր, առաւել նրա համար, որ իւր երիտասարդութեան մէջ երբէք օգուտ ըրքաղեց նրա բարիքներից. Ընդհակառակին, Վիլանստրոպինը պէտք է լինէր ընտանեկան դաստիարակութեան վրկարար ապաս-տանարան թշուառութիւններից. » Ճիշտ այդպէս էր և Թուա-սոն, նա չէր իմանում ոչ ընտանեկան բազդաւորութիւն, ոչ ընտանեկան կեանքի բարձր նշանակութիւնը՝ դաստիարա-կութեան վերաբերութեամբ. « Նրա գաղափարն էր անացին դաստիարակը, որ բոլորովին անջառում է իւր սանին ընտա-նիքից և ապրում է սանիկի հետ բոլորովին այցապէս, քան Պեստարօցին իւր աշակերտների հետ Նչչովիովում»:

Վերջապէս, որ ամենազիտորն է, Պեստարօցին աղ-դեց ժողովրդական ուսուցիչների մէջ հիացում դէպի մար-դու դաստիարակութեան գործը, աւելացրեց նրա վրա գա-ղափարական ոգեգորութիւնն, սաեղեց ժողովրդական ուսու-ցիչների դասակարգութիւնն. » Այդ ժամանակից սկսած, ա-սում է Պալմերը, ուսուցիչը ճանաչում է իրեն, որպէս մարդկութեան ուսուցիչ, որպէս ամենակարևոր Վակուորնե-րից մէկը ժողովրդական կեանքի մէջ, որպէս մի ճարտա-րապեա՝ որ գնում է մի աշնակի հիմք, որի վրա հաստատ-վում է ժողովրդական և պետութեան բարօրութեան շին-ուածը»:





Պատրաստ են տպագրութեան համար

ՀԵՏԵՒԵԼ ԸՆԹԱՑԱԿԻՐԱԾ ԵՐԿԵՐԸ:



- 1) Փան-ժակ Թուսոցի կեանքը.
- 2) Թուսոցի վարդապետութիւնները իւր «Էսլի» հաղինակութեան մէջ.
- 3) Ֆիլանտրոպինիստներ և հիւմանիստներ (մարդասէր մանկավարժներ).
- 4) Գեստալցցու նշանակութիւնը ժամանակալից մանկավարժութեան համար.
- 5) Երիտասարդական գիտակցական քայլը յեղափոխական շաւզի վրա.
- 6) Հայաստանի պատմական անցեալն ու ներկան.
- 7) Խմ ճանապարհորդական լիշողութիւնները Թիւրքաց հայաստանում և Պարսկաստանում.
- 8) Խորտակուած սէր (վէպ).
- 9) Պօլկովնիկ Փրիո.
- 10) Խորհրդաւոր վարդապետ (կեղծիք և հակը մի սուտ ազգասէր իւաչագող հոգեորականի Բ. Թ., որի զծուծ կեանքն ու գործունէութիւնը շատ լաւ բարձր է մանաւանդ Սալմաստի կողմերում):
- 11) Ջախ ջախ քնար՝ (բանաստեղծութիւններ զանազան տպաւորութիւնների տակ գրուած).

Գի՞նն է ՅՈ ԿՈՊ.

2013



